

**ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՄԻՋԵՐ**

Երեկ առաւօտ, Արամ Ա. կաթողիկոսի եւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի միջեւ տեղի ունեցաւ հեռաձայնային խորհրդակցութիւն մը: Վարչապետը մօտէն հետաքրքրուեցաւ ընդհանրապէս պայթումէն ետք Լիբանանի պարզած ներկայ կացութեամբ եւ յատկապէս Լիբանանի հայութեան դիմագրւած դժուարութիւններով: Ան նաեւ անդրադարձաւ Հայաստանի Հանրապետութեան կողմէ կատարուելիք օժանդակութեան՝ թե՛ Լիբանանի պետութեան եւ թե՛ հայ համայնքին:

Վեհափառ հայրապետը վարչապետին ներկայացուց ընդհանուր տեղեկութիւններ Լիբանանի հայ համայնքին կրած վնասներուն շուրջ: Վեհափառ հայրապետը իր գնահատանքը յայտնեց Հայաստանի ցուցաբերած գործնական գորակցութեան նկատմամբ: Վարչապետը յայտնեց, որ վեհափառ հայրապետին հետ անհրաժեշտ է խորհրդակցութիւնները շարունակել, որպէսզի Հայաստանի կողմէ կատարուելիք օժանդակութիւնը ըլլայ օգտաշատ:

ՅՈՒՑԱՐԱՐՆԵՐՈՒ ԶԱՅՐՈՅԹԸ ԿԸ ՀԱՐՈՒԱԾԷ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՊԵՅՐՈՒԹԸ. 2 ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԵՒ 6 ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ ԿԸ ՀՐԱԺԱՐԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՍՍԱՆ ՏԻԱՊ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ԿԱՆԽԱՀԱՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ



Երեքշաբթի, 4 օգոստոսին, Լիբանանի պատմութեան մէջ ամենէն ուժգին ու հսկայական պայթումին հետեւանքները տակաւին կը շարունակուին երկրին ու քաղաքացիներուն վրայ:

Պայթումին ազդեցութիւնը տակաւին շատ երկար պիտի մնայ լիբանանցի ժողովուրդին վրայ՝ ուղղակի իր ճնշումը բանեցնելով առօրեայ կեանքին, քաղաքական, տնտեսական, ընկերային, կրթական, առողջապահական ու ապահովական ոլորտներուն վրայ:

Երեքշաբթի, 4 օգոստոսէն ի վեր ճնշումած քաղաքացիները անցեալ շաբաթավերջին դրսևորեցին իրենց բարկութեան ու ցասումի արտայայտութիւնը, որուն հետեւանքները եղան մայրաքաղաք Պեյրութի մէջ յաւելեալ քանդում, հարիւրաւոր յաւելեալ վիրաւորներ եւ Ներքին ապահովութեան ուժերու ոստիկանի մը նահատակութիւնը:

Շաբաթ կէսօրէ ետք ժամը 3:30-ին

«Հաշուետւութեան» ցոյց խորագիրը կրող բողոքի ցոյց մը կատարուեցան Կեդրոնական Պեյրութի մէջ:

Քաղաքացիական ընկերութեան եւ ժողովուրդային շարժումին հրաւիրած այս ցոյցին ընթացքին Ներքին ապահովութեան ուժերուն եւ լիբանանեան բանակին դեմ բռնկեցաւ ցուցարարներուն ցասումը:

Մար Մխայեղի եւ Ժմմէյեղի փողոցներէն Նահատակաց հրապարակ հասած բազմամարդ ցոյցին ընթացքին երկրին իշխանութիւններուն դեմ լուտանքներ ու վարկաբեկիչ արտայայտութիւններ հնչեցին: Նահատակաց հրապարակին վրայ պատրաստուած էին խորհրդանշական կախաղաններ, որոնք կը վերաբերէին Պեյրութի նաւահանգիստին պայթումին պատասխանատւներուն:

Քիչ անց հարիւրաւոր երիտասարդներ ուղղուեցան Օմարի մզկիթին կողմը գտնուող խորհրդարանին մուղքերէն

Շաբ.ը՝ էջ 2

**«ՊԵՅՐՈՒԹԻ ԵՒ ԼԻԲԱՆԱՆՑԻ
ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ԱԶԱԿՅՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ»-Ը ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ:**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ
ԼԻԲԱՆԱՆԻ ԱՄԵՆԷՆ ՍԵՐՏ
ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ ՅՈՒՍԱԽԱՔ
ՊԻՏԻ ՉԸՆԵՆ ԼԻԲԱՆԱՆՑԻ
ԺՈՂՈՎՈՒՐԳԸ. ՇՈՒՐՁ 253 ՄԻԼԻՈՆ
ԵՒՐՈՅԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄ**



Երեկ Փարիզի մէջ տեղի ունեցաւ Լիբանանի յատուկ նուիրատուներու «Պեյրութի եւ լիբանանցի ժողովուրդի աջակցութեան խորհրդածողով»-ը՝ կազմակերպութեամբ Ֆրանսայի Նախագահի Էմանուէլ Մաքրոնի եւ հովանաւորութեամբ ՄԱԿ-ին: Փարիզի այս խորհրդածողովին մասնակցեցան 36 երկիրներ եւ միջազգային կազմակերպութիւններ:

Խորհրդածողովէն ետք Նախագահ Մաքրոնի գրասենեակը յայտարարեց, որ Լիբանանի անմիջական օժանդակութեան համար ստացուած է շուրջ 253 միլիոն եւրոյի (298 միլիոն տոլար) խոստում:

Ֆրանսայի Նախագահը տեսաժողովի բացման ընթացքին յայտնեց, որ «մեր դէրը լիբանանցի ժողովուրդին կողքին կանգնիլն է»՝ աւելցնելով. «Պետք է արագօրէն գործենք, եւ օժանդակութիւնները պետք է ուղղակիօրէն հասնին գետնի վրայ գտնուող ժողովուրդին... Լիբանանի ապագան խնդրոյ առարկայ է»:

Մաքրոն լիբանանեան իշխանութիւնները յորդորեց «գործի լծուելու երկիրը ընկղմելէն փրկելու եւ ընդառաջելու ձգտումներուն, զորս լիբանանցի ժողովուրդը ներկայիս օրինական կերպով Պեյրութի փողոցներուն մէջ կ'արտայայտէ»:

«Պետք է բոլորը լիբանանցի ժողովուրդին

Շաբ.ը՝ էջ 8

**«ԿԸ ՀԱՄԱՍԱՄ ՄԵՎ ԲԱՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԱՊՐԻ, ՀՈՍ
ՊԻՏԻ ՄՆԱՅ: ԱՆ ՈՐ ԿԸ ՓԱՓԱՔԻ
ՁԳԵԼ ԱՅՍ ԵՐԿԻՐԸ, ՄԵՎ
ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆ»**

**ՇԵՇՏԵՑ ԵՐԵՍՓՈԽԱՆ
Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ**



Երեկ, «Օ. ԹԻ. ՎԻ.» պատկերասփիւռի կայանի հայկական լուրերու բաժնէն հիւրընկալուեցաւ ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի: Ան անդրադարձաւ Պեյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած աղէտին, անոր վնասներուն՝ հիմնական շէտըղ դնելով անպայման վերականգնելու հրամայականին եւ այդ գծով տարուող աշխատանքներուն վրայ: Ան յայտնեց, որ նորակազմ Լիբանանահայութեան վերականգնման մարմինը շատ շուտով պիտի սկսի իր գործունեութիւններուն:

Շաբ.ը՝ էջ 6

**ԿԵԱՆՔԻ ԿՈՉՈՒԵՑԱՒ
«ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՄԱՐՄԻՆ»-Ը**



Պսակածէ ժաիրի համաճարակի ծանր պայմաններուն, տնտեսական տագնապին եւ Պեյրութի նաւահանգիստի պայթումին պատճառած հետեւանքները քննարկելու ու ժողովուրդին կարիքներուն հասնելու նպատակով եւ Արամ Ա. վեհափառ հայրապետին թելադրանքով, կիրակի, 9 օգոստոս 2020-ին, կեսօրուան ժամը 12:30-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, Նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանին եւ մասնակցութեամբ Հայ կաթողիկէ եւ Հայ աւետարանական համայնքներու պետերուն, ԶՅԴ-ի, ՍԴՀԿ-ի եւ ՌԱԿ-ի ներկայացուցիչներուն եւ ՀԲԸՄ-ի, ՀԿԲՄ-ի եւ ԼՕԽ-ի ներկայացուցիչներուն, հաստատուեցաւ «Լիբանանահայութեան վերականգնումի մարմին»-ը:

Մէկ վայրկեան յոռնկայս յարգելէ ետք պայթումի զոհերուն յիշատակը, առաջնորդ սրբազանը ըսաւ, որ հինգշաբթի, 5 օգոստոս 2020-ին, Արամ Ա. վեհափառ հայրապետը մարմուխի յանձնեց հայաշխարհին ուղղուած հայրական կոչ մը, որով աշխարհացորի հայութեան կը իշէցնէր, թէ լիբանահայութեան դիմագրւած տագնապը մեծ է, եւ հետեւաբար, կը թելադրէր, որ լիբանանահայ գաղութի վերականգնումի գործին մէջ ամէն մարդ ստանձնէ պարտքի եւ պարտաւորութեան բաժին:

Ապա Շահէ արք. Փանոսեան ներկայացուց վեհափառ հայրապետին կոչը, որուն մէջ շէտտուած էր, թէ քանդուած կամ վնասուած տուներուն

ԴԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԱՐԱՆԻ

Շաբ.ը՝ էջ 5

**ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ
ՀԱՍԱԾ Է ՊԵՅՐՈՒԹ**



Հայաստանէն օգնութեան առաջին խմբաքանակը արդէն հասած է Պեյրութ: «Արմէնփրես»-ի հաղորդումով՝ այս մասին «Թուրիքըր»-ի իր էջին վրայ գրած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեան:

«Հայաստանի կողմէ եղբայրական Լիբանանին տրամադրուելիք օգնութեան երեք խմբաքանակներէն առաջինը արդէն հասած է Պեյրութ: Հայաստանէն Պեյրութին՝ ի խորոց սրտի», նշած է Հայաստանի արտաքին գործոց նախարարը:

Շաբ.ը՝ էջ 3

**«ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ, ՄԵՐ
ԱՄԲՈՂՁ ԱՉԳԸ ՔԵՁԻ՝ ՀՏԵ Է:
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՁՐԱՅՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՍՓԻՌՔԻ
ՀՁՐԱՅՈՒՄԸ Է»**

ՇԵՇՏԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԺՈՂԻԿՈՍ



Երեկ առաւօտ Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ՝ հանդիսապետութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին:

Պատարագին ներկայ էին Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, Լիբանանի Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչը եւ երեք քաղաքական կուսակցութեանց վերին մարմիններու ներկայացուցիչները:

Շաբ.ը՝ էջ 4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ**

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՏԵ**



Կիրակի, 9 օգոստոս 2020-ին, սուրբ եւ անմահ պատարագէն ետք, Անթիլիասի մայրավանքի վեհարանին մէջ Արամ Ա. վեհափառ հայրապետը ընդունեց այցելութիւնը Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացնող պատուիրակութեան՝ գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի հարցերու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սիւնեանի: Պատուիրակութեան կ'ընկերակցէր նաեւ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբէկեանը:

Շաբ.ը՝ էջ 3

ՅՈՒՑԱՐԱՐՆԵՐՈՒ ԶԱՅՐՈՅԹԸ ԿԸ ՀԱՐՈՒԱԾԷ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ...

մէլը եւ սկսան բախումներ ունենալ այդ մուտքին հսկող ապահովութեան ուժերուն հետ:

Շուրջ ժամ մը տոք այդ թաղը արդէն իսկ պատերազմի դաշտի վերածուած էր՝ ցուցարարներուն եւ ապահովութեան ուժերուն միջեւ:

Առաջինները անխալ կը քարկոծին ապահովութեան ուժերը, իսկ վերջիններս կը փորձէին պաշտպանել խորհրդարան տանող մուտքը, ինչպէս նաեւ արցունքաբեր կազերով ցրուել ցուցարարները:

Յոյցէն երկու ժամ տոք ցուցարարները մուտք գործեցին «Լը Կրեյ» պանդոկ եւ բարձրանալով վերի յարկերը նեղութիւն պատճառեցին պանդոկի հիւրերուն ու հրդեհ մը բռնկեցուցին պանդոկին մէջ:

Ներքին ապահովութեան ուժերէն խմբակ մը փութաց «Լը Կրեյ» պանդոկ՝ հակակշիռի տակ առնելու համար պանդոկին մէջ արձանագրուող խուլիկանութիւնները:



Պանդոկին մէջ ցուցարարներուն եւ ապահովութեան ուժերուն միջեւ արձանագրուած բախումներուն իբրեւ հետեւանք նահատակուեցաւ Ներքին ապահովութեան ուժերու ոստիկան Թաուֆիք Տուէլիի:

Ամբողջ այս ընթացքին ցուցարարներուն եւ ապահովութեան ուժերուն միջեւ բախումները շարունակուեցան եւ շատ անելի սաստկացան՝ տեղափոխուելով Ազարիէ փողոց:

Կեդրոնական Պէյրութի կարգ մը շէնքերուն մէջ ցուցարարներ բռնկեցուցին հրդեհներ եւ քանդեցին հոն գտնուող գրեթէ բոլոր կառոյցներն ու վաճառատունները:

Մինչ Պէյրութի մէջ այս բուռն բախումները տեղի կ'ունենային, խումբ մը ցուցարարներ՝ գլխաւորութեամբ հանգստեան կոչուած զնդապետ-զօրավար ժորժ Նատերի, մուտք գործեցին Պուսթօս պալատ, այլ խօսքով՝ արտաքին գործոց նախարարութիւն եւ յայտնեցին, որ նախարարութիւնը իրենց հակակշիռն տակ կը գտնուի եւ պիտի վերածուի «յեղափոխութեան» կեդրոնին:

Ցուցարարները արտաքին գործոց նախարարութեան շէնքին վրայ բարձրացուցին կարմիր պաստառ մը, որուն վրայ պատկերուած էր ժողովրդային շարժումը խորհրդանշող բռուկքը եւ գրուած, թէ Պէյրութը ապագինուած մայրաքաղաք է:

Նատեր նշեց, որ իրենք նախարարութիւնը չեն բռնագրւած, այլ ազատագրած են փտած իշխանութեան լուծէն:

Ցուցարարները նախարարութեան պատէն վար առին հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի պաշտօնական լուսանկարը եւ գետին նետեցին զայն, ու քանդելէ տոք անոր շրջանակը, լուսանկարը պատռտեցին ու ապա հրկիզեցին զայն:

Նատեր յայտնեց, որ ցուցարարները պիտի գրաւեն նաեւ այլ նախարարութիւններ:

Իսկպպէս ալ յաջորդ նախարարութիւնը եղաւ տնտեսութեան եւ առեւտուրի նախարարութիւնը, ուր ցուցարարները մուտք գործեցին եւ հոն գտնուող բոլոր փաստաթուղթերը փճացուցին:

Յաջորդը եղաւ Դրամատուներու միութեան կեդրոնը, ուր ցուցարարները քանդեցին ամէն ինչ:

Ցուցարարները մուտք գործեցին նաեւ կենսոլորտի նախարարութեան կեդրոնատեղի, Ելեկտրականութեան ընկերութիւն, ինչպէս նաեւ ուժանիւթի նախարարութիւն:

Գիշերուան ժամը 10:30-ի շուրջ լիբանանեան բանակը հասաւ Պուսթօս պալատ, ինչպէս նաեւ մնացեալ նախարարութիւնները եւ ցուցարարները ցրուեց այդ կառոյցներէն:

Արտաքին գործոց նախարարութեան պարագային, Էշ-րեֆիէի փողոցներուն մէջ արձանագրուեցան բախումներ բաւակին եւ ցուցարարներուն միջեւ:

Նշենք, որ բանակը երեկոյեան ժամը 7:30-ին արգելք հանդիսացաւ, որ երիտասարդներու մեծաթիւ խումբ մը հանտաք Ղամիթէն դեպի Կեդրոնական Պէյրութ կ'ուղղուի՝ կանխարգիւելու համար ցուցարարներուն եւ այդ երիտասարդներուն միջեւ բախումներու հաւանականութիւնը:

Կեդրոնական Պէյրութի մէջ արձանագրուած բախումները հանդարտեցան գիշերուան ժամը 11:15-ին, իսկ կէս գիշերին բոլոր ցուցարարները հեռացած էին մայրաքաղաքէն:

Լիբանանեան Կարմիր խաչը յայտնեց, թէ ցոյցին ընթացքին արձանագրուած են 238 վիրաւորներ, որոնցմէ 70-ը փոխադրուած են տարբեր հիւանդանոցներ:

Ժորժ Նատեր երէկ յայտնեց, որ ժողովրդային շարժումը պիտի շարունակէ իր ընթացքը եւ մազլցողական այլ քայլերու պիտի դիմէ:

Ան շէշտեց, որ ժողովուրդն է իշխանութիւններուն աղբիւրը՝ հաստատուելով, որ ներկայ իշխանութիւնը քանդած է Լիբանանը:

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան անուումով ուշ գիշերին կատարուեցան թուիթթեան երկու գրառումներ, որոնցմէ առաջինը այն էր, թէ լիբանանցիները երկարատեւ տառապանքներ ապրած են եւ արժանի են ունենալու այնպիսի ղեկավարներ, որոնք կը լսեն զիրենք եւ թափանցիկութեամբ ու հաշուետուութեան ենթարկուելով կ'անսան անոնց պահանջներուն, իսկ երկրորդը կը հաստատեր, որ դեսպանատունը կը զօրակցի լիբանանցի ժողովուրդին խաղաղ ցոյցերուն եւ կոչ կ'ուղղէ դադրեցնելու ցուցարարներուն վայրագութիւններն ու բռնարարքները:

Երէկ երեկոյեան ժամը 5:00-էն սկսեալ ցուցարարներ սկսան հաւաքուիլ Նահատակաց հրապարակին վրայ:

Ժամը 6:30-ի շուրջ Կեդրոնական Պէյրութի մէջ ցուցարարները յարձակեցան ցոյցին վայրը հասած երեսփոխան Շամէլ Ռուբոզի վրայ եւ քարկոծեցին անոր թիկնապահները, ինչ որ պատճառ դարձաւ, որ Ռուբոզ Կեդրոնական Պէյրութէն հեռաւայ:

Շուրջ ժամ մը տոք ցուցարարները ուղղուեցան խորհրդարանին մուտքը տանող Պէյրութի քաղաքապետարանի թաղը եւ դարձեալ բախումներ ունեցան ապահովութեան ուժերուն հետ:

Շարունակուած Ա. Էջէն

Մինչ ցուցարարներուն եւ Ներքին ապահովութեան ուժերուն միջեւ բախումները կը շարունակուէին, խումբ մը երիտասարդներ ներխուժեցին Սթարքոյի մէջ Դանրօգուտ շինութեանց եւ հարցերու նախարարութեան կեդրոն: Բանակը անմիջապէս փութաց Սթարքօ եւ տեղւոյն վրայ ցուցարարները նախարարութենէն դուրս բերաւ:

ՏԻԱՊ. «ԵՐԿՐԻՆ ՏԱԳՆԱՊԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԼՈՒԾԵԼ ԱՈՒՆՑ ԿԱՆԽԱՅԱՍ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ»

Շաբաթ օր, երեկոյեան ժամը 7:30-ին, վարչապետ Դասսան Տիապ վարչապետարանէն արտասանեց պատկերասփռուած ճառ մը, որուն մէջ հաստատեց, թէ տակաւին մայրաքաղաք Պէյրութը կը տնքայ նաւահանգիստին մէջ արձանագրուած հսկայական պայթումին ազդեցութեան տակ:

Տիապ հաստատեց, որ չկայ յանցաւոր լիբանանցի մը, որ պաշտպան պիտի գտնէ: Ռ՞վ որ այս աղետին պատասխանատու է, հարցաքննութեան պիտի ենթարկուի եւ դատական իշխանութենէն առաջ ժողովուրդին հարցումներուն պիտի պատասխանէ», ըսաւ ան:

Վարչապետ Տիապ շէշտեց, որ այս օրերուն պէտք է ազգային պատասխանատուութիւն արձանագրուի, որովհետեւ Լիբանան աղետի մէջ է եւ խիստ զգայուն եւ դժուար պայմաններէ կ'անցնի:

«Ինչպէ՞ս կարելի է այդքան վտանգաւոր քիմիական նիւթ մը պահեստանոցին մէջ պահել՝ առանց ապահովական որոշ քայլեր որդեգրելու: Ինչո՞ւ այդ նիւթը 7 տարիէ ի վեր նաւահանգիստին մէջ կը գտնուէր: Ռ՞վ էր այդ նիւթին գոյութենէն օգտուող կողմը: Այս բոլորը հարցումներ են, որոնց պատասխանները պիտի բացայայտուին հետաքննութեան ընդմէջէն՝ աւելցնելով, որ հետաքննութիւնը պիտի ընդարձակուի», ըսաւ ան:

Տիապ յայտնեց, որ կառավարութիւնը գործած է ժողովրդային շարժումին պահանջներուն յանձնառութեամբ՝ գիտնալով, որ Լիբանան կ'ուղղուի դէպի փլուզում: «Երկրին տագնապը կարելի չէ լուծել առանց կանխահաս երեսփոխանական ընտրութիւններու: Մենք բոլորին համագործակցութեան կարիքը ունինք՝ շրջանցելու համար այդ դժուար փուլը: Ժողովուրդին մտավախութիւններն ու հարցադրումները լաւ կը հասկնամ, եւ ցաւակցութիւն կը յայտնեմ նահատակներուն ընտանիքներուն, որոնց ցաւը մեծ է», յայտնեց ան:

Տիապ շէշտեց, որ Լիբանան աղետալի վիճակի է արտակարգ դրութեան մէջ կը գտնուի, եւ կոչ ուղղեց քաղաքական ուժերուն համաձայնելու յաջորդ փուլին շուրջ: «Ես պատրաստ եմ այս պատասխանատուութիւնը յառաջիկայ երկու ամիսներուն ընթացքին ալ ստանձնելու, մինչեւ որ համաձայնութիւն գոյանայ, իսկ երկուշաբթի օրուան կառավարութեան նիստին ընթացքին պիտի առաջարկեմ երեսփոխանական կանխահաս ընտրութիւններ կատարել: Ես կը զօրակցիմ փոփոխութիւններ յառաջացնելու լիբանանցիներուն փափաքին», ըսաւ ան:

ՏԵՐԵԿԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՈՒ ՓԱՂԱՏԱՊՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ՅՐԱԺԱՐԵՑԱՒ

Տեղեկատուութեան նախարար Մանալ Ապտել Սամատ երէկ հրաժարեցաւ կառավարութենէն:

«Լիբանանցիներէն ներում կը հայցեմ, որ չկրցանք անոնց ձգտումները իրագործել: Փոփոխութեան գործադրութիւնը դարձաւ անկարելի: Իրականութիւնը ձգտումներուն չիամապատասխանեց, իսկ Պէյրութը հարուածած աղետէն ետք, ես կը հրաժարիմ կառավարութենէն», շէշտեց Ապտել Սամատ:

Կենսոլորտի եւ վարչական բարեկարգումի պետական նախարար Տըմիհանու Քաթթար վարչապետ Տիապին ներկայացուց իր գրաւոր հրաժարականը:

«Պայթումին պատճառով զաւակներու ընկերները զոհուեցան. ես չեմ կրնար նախարարութեանս պատասխանատուութիւնը շարունակել», շէշտեց Քաթթար: Երեկոյեան ժամը 9:30-ին Քաթթար պաշտօնապէս յայտարարեց, թէ հրաժարած է կառավարութենէն: Ան ըսաւ. «Հոգիս տխուր է մեռնելու չափ»:

Երեսփոխան Նաամաթ Աֆրամ երէկ կէսօրին Տիմանէն յայտնեց, թէ կը հրաժարի խորհրդարանէն:

Իր կարգին, երեսփոխան Միշէլ Մուաուատ երէկ երեկոյեան խորհրդարանէն հրաժարեցաւ:

Երեկոյեան ժամը 8:00-ին, Մուսթաքպալ հոսանցի երեսփոխան Տիմա ժամալի հրաժարեցաւ խորհրդարանէն՝ յայտնելով, որ Լիբանանի քաղաքական կեանքը արմատական փոփոխութեան կարիքը ունի:

Միւս կողմէ, երէկ կէսօրէ ետք կարգ մը նախարարներ վարչապետարանին մէջ ունեցան հանդիպում մը, որմէ ետք ճարտարարուեստի նախարար Իմատ Դուպալլա հաստատեց, որ կառավարութիւնը պիտի չիրաժարի եւ պիտի շարունակէ ստանձնել իր պատասխանատուութիւնը՝ առանց ճնշումներու եւ **շակաթօժի** ենթարկուելու:

«Մենք ժողովուրդին նկատմամբ մեր պատասխանատուութիւնը պիտի ստանձնենք», ըսաւ Դուպալլա:

Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժեմայէլ, կուսակցութեան ընդհանուր քարտուղար Նազար Նաճարեանի յուղարկաւորութեան արարողութեան ըն-



թացքին արտասանեց խօսք մը, որուն մէջ յայտարարեց Փաղանգաւոր կուսակցութեան պլոքի երեսփոխաններուն՝ իր, Էլիաս Դանքաշի եւ Նետիմ Ժեմայէլի հրաժարականը՝ խորհրդարանէն:

Նշենք, որ Նազար Նաճարեան նահատակուած էր Պէյրութի նաւահանգիստին պայթումին պատճառով: Անոր յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Դայ կաթողիկէ Ս.

Եղիա - Ս. Գրիգոր Լուսաւորիչ աթոռանիստ եկեղեցւոյ մէջ՝ յուղարկաւորներու հոծ բազմութեան ներկայութեան: Ներկայ էր նաեւ ԴՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի:

Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժահժահ շաբաթ երեկոյեան այցելեց «Սեսին» հրապարակ, ուր յայտարարեց, որ հրաժարականները կը գտնուին իրենց գրպաններուն մէջ՝ աւելցնելով, որ Զօր հանրապետութիւն պլոքի երեսփոխանները պիտի հրաժարին, երբ երաշխիքներ ստանան, որ այդ հրաժարականը իրապէս փոփոխութիւն մը պիտի արձանագրէ:

Նշենք, որ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի խորհրդրարանի դիւանը հրաւիրեց նիստի մը, որ պիտի գումարուի այսօր կէսօրէ ետք ժամը 2:00-ին:

Պըրրի ԵՈՒՆԵՍԵՕ-ի մէջ խորհրդարանի բաց նիստեր յայտարարեց հինգշաբթի, 13 օգոստոսէն, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն սկսեալ՝ քննարկելու համար մայրաքաղաք Պէյրութը հարուածած պայթումին վերաբերող մանրամասնութիւնները՝ սկսեալ նաւահանգիստին մէջ ամբարուած քիմիական նիւթի գոյութեան անտեսումէն եւ այդ թղթածրարին նկատմամբ ցուցաբերուած անփութութենէն մինչեւ անոր ստեղծած աղետը:

ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՆԵՐՆ ՈՒ ԴԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԾԱՌՈՒՆԱԿՈՒՆ



Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառած զոհերուն թիւը հասաւ 158-ի, վիրաւորներունը հասաւ 6000-ի, ինչպէս նաեւ կան 21 անյայտ կորսուածներ:

Լիբանանեան բանակը գումեց բանակայիններ Ըսթֆէն Ռուհանայի, Դասսան Սատեքի եւ Դամճա Իսքանտարի մահերը, որոնք նահատակուեցան Պէյրութի նաւահանգիստին պատճառած պայթումին ընթացքին:

Երէկ կէսօրէ ետք պայթումի վայրին մէջ գտնուեցաւ Պէյրութի հրշէջներու անդամներէն մէկուն դիակը:

Լիբանանի մէջ տուրիստական դեսպանատունը հաստատեց, որ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով զոհուած են 43 տուրիացիներ՝ աւելցնելով, որ զոհերուն թիւը տակաւին վերջնական չէ:

Լիբանանի մէջ Դոյանտայի դեսպանին կինը, որ ծանօթօրէն վիրաւորուած էր՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով, երէկ մահացաւ:

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը յայտնեց, որ բանակը կը շարունակէ անյայտ կորսուածներու որոնողական աշխատանքը՝ ընդգծելով, որ ողջ մնացած քաղաքայիններ որոնող բոլոր խմբակներուն աշխատանքը վերջ գտած է, եւ աշխատանքը կը շարունակուի մարմինի մնացորդներ որոնելու իմաստով՝ միջազգային խմբակներու օժանդակութեամբ:

Բանակի հրամանատարութիւնը հաստատեց, որ նաւահանգիստը բաժնուած է տարբեր բաժիններու, եւ իւրաքանչիւր օտար խմբաւորում ստանձնած է բաժին մը՝ որոնողական աշխատանքները շարունակելու:

Միւս կողմէ, Զինուորական ոստիկանութիւնը՝ հովանաւորութեամբ ընդհանուր դատախազ Դասսան Օուէյտաթի, երէկ շարունակեց ապահովական կառոյցներու պատասխանատուներուն հարցաքննութիւնը՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին առնչութեամբ:

Վերադատ ատենիի ընդհանուր դատախազ Դասսան Խուրի այսօրուընէ սկսեալ պիտի հարցաքննէ ապահովական կառոյցներու պատասխանատուները՝ անոնցմէ ստանալով պայթումին վերաբերող **թեքնիք** տեղեկութիւններ:

«ԱՃՓ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ Պէյրութի նաւահանգիստին մէջ գործող ֆրանսացի փորձագետներ ընդգծած են, թէ նաւահանգիստի հսկայական պայթումը 43 մեթր խորութեամբ փոս մը յառաջացուցած է:

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը կիրակի օրւան իր քարոզին մէջ յայտնեց, որ Պէյրութի նաւահանգիստին պայթումը մարդկութեան դեմ գործուած անարգ ոճիր է՝ պահանջելով պայթումին մասին միջազգային հետաքննութիւն բանալ:

Ռայի պատրիարքը կոչ ուղղեց կառավարութեան՝ հրաժարելու, ինչպէս նաեւ կանխահաս երեսփոխանական ընտրութիւններ կատարելու:

Իր կարգին, յոյն ուղղափառ համայնքի Պէյրութի առաջնորդ Էլիաս Աուտէ Եպիսկոպոսը հաստատեց, որ ինքզինք յարգող երկիրներուն մէջ պատասխանատուները կը հրաժարին, երբ իրենց պարտականութիւնը կատարելու ընթացքին թերացում մը կամ բացթողում մը արձանագրուի:

ՕՏԱՐ ՊԵՏՏՕՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՌՈՐԹԻՒՆՆԵՐ ԿԸ ԴԱՄՆԻՆ ԼԻԲԱՆԱ՝ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Դանրապետութեան նախագահութիւնը շաբաթավերջին հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ Լիբանանի կողմէ արաբական եւ միջազգային օժանդակութիւններ մերժելու մասին շրջանառութեան մէջ դրուող բոլոր լուրերը անճիշդ են:

Միւս կողմէ, շաբաթ առաւօտեան Լիբանան հասաւ Արաբական լիկայի ընդհանուր քարտուղար Ամմետ Ապուլ Ղէթ, որ հանդիպումներ ունեցաւ լիբանանցի պետական պատասխանատուներու հետ:

Ապուլ Ղէթ այցելեց Պապատա, ուր հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի հետ:

Դանդիպումէն ետք Ապուլ Ղէթ շէշտեց, որ ինք խոր վիշտով

ՀՅՎ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ԱԻԵԼԻ ՔԱՆ ԵՐԲԵՔ ԶՕՐԱՎԻԳ ԿԱՆԳՆԻՐՔ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ



Արդեն տնտեսական անսախընթաց տագնապ դիմագրավող լիբանանահայությունը բոլոր լիբանանցիներուն նման ապրեցաւ երեքշաբթի, 4 օգոստոս 2020-ին Պեյրութի նաւահանգիստին մէջ պատահած ահաւոր պայթումին աղետը:

Անոր հետեւանքով մինչ օրս համայնքը ունի 13 զոհ, բազմաթիւ վիրաւորներ եւ անսախընթաց նիւթական վնասներ, յատկապէս հայաբնակ Պուրճ Յամուտի մէջ: Մինչ պայթումի վայրին մէջ փրկութեան աշխատանքները կը շարունակուին, պէտք չէ բացառել, որ ի շարս այլ քաղաքացիներու, նաեւ աւելնան հայ զոհերը: Հայկական հաստատութիւնները, որոնք արդէն դժուար կացութեան մէջ կը գտնուէին, ենթարկուած են քանդումի եւ կարօտ են վերաշինութեան: Այս բոլորը կը պատահի, երբ երկրին մէջ նախապէս անկում արձանագրած համավարակի պարագաներն ու զոհերը մտահոգիչ կերպով աւելնալու սկսած են:

Այս բոլորով հանդերձ, պայթումէն անմիջապէս ետք համայնքը արդէն զօրաշարժի ենթարկուած է՝ նախ հասնելու համար վիրաւորներուն, ապա եւ նախաձեռնելու համար հետեւանքներու վերացման: Ընկերային ցանցերով համայնքի զօրաշարժին հետեւողները արդէն կը տեսնեն, թէ ինչպէ՛ս անգամ մը եւս համայնքը իր վերապրումի անկոտորում կամքը ցոյց կու տայ:

Հայ յեղափոխական դաշնակցութեան Հարաւային Ամերիկայի Կեդրոնական կոմիտեն, Արժանթինի, Ուրուկուէյի եւ Պրագիի իր բոլոր ընկերներուն եւ ընկերուհիներուն անունով իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ զոհուածներու ընտանիքներուն եւ ամբողջական զօրակցութիւն՝ լիբանանահայութեան:

ՀՅՎ Հարաւային Ամերիկայի կազմակերպութիւնը իր գաղափարակից կազմակերպութիւններուն՝ ՀՕՄ-ի, ՀՄԸՄ-ի եւ Համազգայինի շրջանային ղեկավարութիւններուն հետ համատեղ շրջանի երեք հայահոծ երկիրներուն մէջ արդէն սկսած էր լիբանանահայութեան օժանդակութեան դրամահաւաքի: Այս պայթումէն ետք, երբ աւելի քան երեք կը զգացուի համայն սփիւռքի զօրակցութեան անհրաժեշտութիւնը մարդասիրական օգնութեան անհրաժեշտ կարիքը զգացող լիբանանահայութեան, կոչ կ'ուղղենք մեր համայնքի բոլոր կազմակերպութիւններուն եւ իւրաքանչիւր անհատի իրենց մասնակցութիւնը բերելու այդ դրամահաւաքին:

Պահն է, որ իբրեւ կազմակերպուած համայնքներ փաստը տանք մեր գիտակցութեան՝ յանձնառու ըլլալու աշխարհացրիւ, բայց միասնական հայկական սփիւռքի մը եւ միջհամայնքային փոխօգնութեան պատրաստակամութեան:

ՀՅՎ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԱՐՇԱՆԹԻՆ, ՈՐՈՐԿՈՒՄԵՆ, ՊՐԱԶԻԼ

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջն

Հայաստանը առաջին թռիչքով իբրեւ մարդասիրական օգնութիւն Լիբանան ուղարկած է դեղորայք եւ առողջապահական պարագաներ: «Չուարթնոց» օդակայանին մէջ լրագրողներու հետ զրոյցի մը ընթացքին այս մասին յայտնած էր Հայաստանի սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար Չարէի Սիւսանեան, որ նոյնպէս մեկնած է Լիբանան՝ տեղւոյն հայկական համայնքի խնդիրներուն ծանօթանալու նպատակով: «Մենք, շատ նրբանկատ գտնուելով, Լիբանանի մէջ մեր համայնքի շահերէն մեկնելով՝ առաջին բեռը կ'ուղարկենք Լիբանանի ժողովուրդին, Լիբանանի պետութեան համար, որպէսզի հարց չծագի, թէ ինչո՞ւ առանձին մօտեցում կը ցուցաբերուի Լիբանանի հայկական համայնքին, եւ ոչ թէ Լիբանանի ամբողջ ժողովուրդին: Երկրորդ թռիչքով արդէն հայկական համայնքին համար պիտի ըլլայ մթերք, ամէն ինչ, որ համայնքը անհրաժեշտ կը նկատէ ըստ ցուցակներու, որոնք արդէն ստացած ենք: Նոյնը նաեւ երրորդ թռիչքով: Շատ կարեւոր կը նկատենք, որ Լիբանանի ժողովուրդը հասկնայ, թէ մենք կը յիշենք այն դրական դերը, որ անոնք ունեցած են մեր ժողովուրդի ճակատագիրին մէջ, մանաւանդ Ցեղասպանութենէն ետք, երբ անոնք թոյլ տուած են, որ մեր հայրենակիցները այնտեղ հաստատուին եւ բարգաւաճին երկար տարիներ», նշած էր ան:

Սիւսանեան աւելցուցած էր, որ Լիբանան կը մեկնին այնպիսի պայմաններու մէջ, երբ երկիրը ալեկոծուած է: «Բայց Լիբանանի ժողովուրդը մեզի համար եղբայրական ժողովուրդ է, պետութիւնն ալ մեզի համար եղբայրական պետութիւն է», ըսաւ Սիւսանեան:

Մարդասիրական բեռներու արկղերը ունէին հետեւեալ մակագրութիւնը՝ «Հայաստանի սրտէն՝ Պեյրութին»:

Չարէի Սիւսանեան յայտնած է, որ յաջորդ թռիչքը տեղի պիտի ունենայ 9 օգոստոսին, իսկ երրորդը՝ 11 օգոստոսին: Անոր համաձայն, սակայն, ասիկա չի նշանակեր, թէ այսքանով պիտի սահմանափակուին:

ՀԱՅՐԵՆԻ «ԹԵՐԹ» ԿԱՅԵԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ՝

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՇԱՐԺՈՒՄ ԶԿԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՕՏ. ՄԵՐՉԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՎ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ»

Պեյրութի պայթումէն, այդ ցնցումէն ետք մեր համայնքին համար, բնականաբար, հիմնական խնդիրը, ապրելու, գոյատեւման կամքի վերականգնումն է: Պէտք է ըսել, որ մեր ժողովուրդին մօտ հիմա բացառիկ կերպով ինքզինք վերագտնելու, իր տան, բնակարանին, հաստատութեան հետ ըլլալու մթնոլորտը կը տիրէ: Այս մասին արտայայտուեցաւ ՀՅՎ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի՝ «Թերթ Էյ. Էմ.»-ի հետ զրոյցի պահուն, անդրադառնալով Պեյրութի աղետէն ետք հայ համայնքի խնդիրներուն:



Թեամբ մտահոգ է Լիբանանի մէջ կատարուած այս աղետով եւ իր զօրակցութիւնը կը յայտնէ բարոյական, նիւթական թէ ապրանքատեսակի իմաստով:

Բացի մխիթարանքի խօսքերէն ուրիշ ոչինչ կրնանք ըսել այն ընտանիքներուն, որոնք նահատակներ ունեցան, առողջութիւն, բարի ապաքինում բոլոր անոնց, որոնք դեռ հիւանդանոցներու մէջ վիրաւոր են, կրնանք միայն ըսել, որ մեր կամքը զօրաւոր է, պէտք է մնանք այստեղ, դարձեալ պէտք է վերականգնինք իբրեւ լիբանանահայութիւն», շեշտեց ան:

Խօսելով վիրաւորներու եւ զոհերու մասին՝ Բագրատունի նշեց, որ երեւելի դրութեամբ զոհերը 12 էին, որոնց կարգին՝ մէկ մայրապետ: «Վիրաւորներու նախնական թիւը 250-ի մօտ էր, այսօր աւելի քան երեք հարիւր է, որովհետեւ առաջին գիշերուան դէպքին յաջորդող ժամերուն եղան տոր դէպքեր, որոնք հետեւանքով տակաւին իրենց տան մէջ մնացողներ անմիջական պէտք զգացին վիրաբուժական գործողութիւններու եւ աւելի ուշ՝ այլ օգնութեան: Դժուար է անմիջակա-

ԱՄԱՆԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Շար.ը՝ էջ 7

ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՈՒ ՔԱՐԱԿՈՅՏԵՐՈՒ ՎԵՐԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ



Պուրճ Յամուտի քաղաքապետութիւնը անգամ մը եւս կոչ կ'ուղղէ շրջանի բնակիչներուն, որ ամէնէն արագ միջոցին փշրուած ապակիները եւ քարակոյտերը վար իջեցնեն իրենց տուններէն եւ տանիքներէն, որպէսզի կարելի ըլլայ ձեռքազատիլ անոնցմէ:

Այս ծիրին մէջ, Պուրճ Յամուտի քաղաքապետութեան աշխատանքային բաժանմունքը, ինչպէս նաեւ շրջանի միութիւններն ու կամաւորները կը շարունակեն իրենց աշխատանքները՝ թաղամասերու մաքրութեան, ապակիներու եւ քարակոյտերու վերացման գործը:



ԱՌԿԱՆՈՒԱԾ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Մեր այսօրուան թիւը, 12 էջով ամբողջովին յատկացուած պիտի ըլլար Մերի դաշնագիրին 100-ամեակին: Լիբանանի մէջ տիրող ծանօթ պատճառները յետաձգեցին մեր այս նախաձեռնութիւնը: Չուզահեռ այսօր կազմակերպուած էր նաեւ առցանց գիտական լսարան, ուր Հայաստանէն եւ սփիւռքէն պատմաբաններ, իրաւագետներ եւ միջազգայնագետներ այս առիթով պիտի քննարկէին պատմագիտական շեշտադրումներու, իրաւաքաղաքական առանցքներու եւ աշխարհաքաղաքական մեկնաբանութիւններու ուղղութիւնները:

Մեր զոյգ նախաձեռնութիւնները կ'աւակախուին, եւ կը յուսանք, որ յառաջիկային կարենանք վերակազմակերպել իրաւաքաղաքական այժմեական նշանակութիւն ունեցող Մերի դաշնագիրին եւ իրաւարար վճիռին նուիրուած մեր ծրագիրները:

«Ա.»

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ...

Շարունակուած Ա. Էջն



Պատուիրակութիւնը Լիբանան հասած էր Հայաստանի կողմէ երեք փուլերով Լիբանանի կատարուելիք օժանդակութեանց առաջին փուլի թռիչքին հետ: Պատուիրակութիւնը վեհափառ հայրապետին ներկայացուց իր առաջնութեան նպատակը եւ յատկապէս Լիբանանի հայութեան կատարուելիք օժանդակութեան զանազան երեսները:



Վեհափառը իր գնահատանքը յայտնեց Հայաստանի պետութեան՝ թէ՛ Լիբանանի եւ թէ՛ հայ համայնքին իրենց կատարելիք օժանդակութեանց համար: Միաժամանակ ան յիշեցուց, որ Լիբանանի հայութեան վերականգնումին գծով կատարուելիք նիւթական օժանդակութիւնը պէտք է ըլլայ միասնական ճիգով եւ կազմակերպուած կերպով: Հետեւաբար, փոխանակ մասնակի հանգանակութիւններ ու նուիրատուութիւններ կատարելու կամ կազմակերպելու, այդ աշխատանքները պէտք է կատարուին կաթողիկոսարանի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամին կողմէ հաստատուած յատուկ հաշիւներու ճամբով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՍՈՒՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ



Սփիւռքի հարցերու գլխաւոր յանձնակատարի գլխաւորած պատուիրակութիւնը Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան մէջ հանդիպեցաւ թերթերու եւ ծայնասփիւռի կայաններու տնօրէններուն հետ: Խորհրդակցութիւնները կը վերաբերէին Հայաստանի կողմէ Լիբանան հասած եւ տակաւին հասնելիք օժանդակութիւններուն, Պեյրութի նաւահանգիստին մէջ արձանագրուած պայթումին հետեւանքներուն եւ լիբանանահայութեան վերականգնումի մեկնարկուող աշխատանքներուն:

ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԵՉ

ՊԵՅՐՈՒԹԻ ՊԱՅԹՈՒՄԻՆ
ՊԱՏՏԱՌՈՎ ԶՈՀՈՒԱԾՆԵՐՈՒ
ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Մայր աթոռ Ս. Էջմիածինի Ս. Տրդատի բաց խորանին մօտ, 9 օգոստոսին, մատուցուած է սուրբ եւ անմահ պատարագ: Պատարագիչը եղած է Մայր աթոռի Թանգարաններու եւ արխիւի տնօրէն Ասողիկ արք. Կարապետեան:

Յաւարտ սուրբ պատարագին, Նախագահութեամբ Ամենայն հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի, կատարուած է հոգեհանգստեան արարողութիւն՝ 4 օգոստոսին Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ տեղի ունեցած ուժգին պայթումին պատճառով զոհուածներուն համար:

Մայր աթոռի տեղեկատուական համակարգի Էջով հաղորդուած տեղեկութիւններուն համաձայն, սուրբ պատարագին եւ հոգեհանգստեան արարողութեան ներկայ եղած են Յայաստանի մէջ Լիբանանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մայա Տադէր, ՅԲԸՄ-ի Կեդրոնական վարչական ժողովի անդամ, Միջին Արեւելքի եւ Յայաստանի ծրագիրներու պատասխանատու Վազգէն Եագուպեան, ազգային բարերար Գաբրիէլ Զեմպերճեան եւ լիբանանահայեր:

Ներկայ հոգեւոր դասը եւ ժողովուրդը հայոց հայրապետին գլխաւորութեամբ աղօթք բարձրացուցած է առ Աստուած՝ Պէյրութի պայթումի զոհերու հոգիներու հանգստութեան համար:

Հոգեհանգստեան կարգէն առաջ, Ամենայն հայոց Կաթողիկոսը՝ յիշեալ ողբերգական իրադարձութեան վերաբերեալ իր վշտակցութեան խօսքը ուղղած է ներկաներուն:

ՓԵՆԹԱԿՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ՝
ՊԵՅՐՈՒԹԻ ՊԱՅԹՈՒՄԻՆ ԵՒ
ԱՆՈՐ ՊԱՏՏԱՌՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց Նախարար Մարք Եսփոր յայտարարեց, որ տակաւին չէ յստակացած, թէ Պէյրութի Նաահանգիստի պայթումը «դիտաւորեալ յարձակո՛ւմ էր, թե՛ արկած»:

Ան նշեց, որ ամերիկեան կառավարութիւնը ամէն ջանք պիտի թափէ լիբանանցի ժողովուրդին օգնելու համար:

Եսփոր «Ֆոքս Նիուզ» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց. «Զանդիջ հարց, մարդոց համար կը ցաւի»:

«Իրապետ ունինք օդանաւեր, որոնք արդէն պատրաստ են օժանդակութիւնները մատակարարելու, եւ կ'ուզենք մեր կարելին ընել օգնելու լիբանանցի ժողովուրդին՝ իր կարիքի ժամուն», աւելցուց ան:

Ինչ կը վերաբերի պայթումի պատճառներուն եւ Թրամփի՝ զայն յարձակում նկատելուն շուրջ յառաջացած վեճին, Եսփոր ըսաւ. «Վերջնական առումով տակաւին չենք գիտեր»:

«Ինչպէս գիտեք, առաջին օրը, ինչպէս Նախագահ Թրամփ ըսաւ, կարծեցիք, թէ թերեւս յարձակում է, եւ մեզմէ ոմանք այն մտածումը ունէին, թէ օրինակի համար, պայթողները Յըզպալլային պատկանող պահ դրուած զէնքեր էին կամ թերեւս Յըզպալլային պատկանող զէնքի արտադրութեան կառոյց մը», նշեց Միացեալ Նահանգներու պաշտպանութեան Նախարարը:

Եսփոր քննադատեց կարգ մը լրատուամիջոցներ՝ առանց նշելու զանոնք, յայտնելով. «Հարցին մասին խօսելով մեկնաբանեցի, թէ ատիկա կը նմանի արկածի, եւ ցաւալի է, որ կարգ մը լրատուամիջոցներ կը փորձեն վարչակարգին մէջ պառակտում յառաջացնել, թերեւս իմ, Նախագահին եւ ուրիշներու միջեւ»: Ան աւելցուց, որ այդ լրատուամիջոցներուն ըսածները «պարզապէս ճիշդ չեն»:

«Իրականութեան մէջ, ատիկա մեծ աղէտ է, եւ Նախագահի ղեկավարութեան տակ մեր բոլոր ջանքերը պիտի թափենք լիբանանցի ժողովուրդին օգնելու եւ ճիշդը կատարելու», ըսաւ Փենթալոնի ղեկավարը:

«ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ, ՄԵՐ ԱՄԲՈՂԱԶ ԱԶԳԸ ՔԵԶԻ՝ ՀԵՏ Է...

Շարունակուած Ա. Էջն



Իր հայրապետական պատգամը առ Աստուած ուղղուած գոհաբանական աղօթքով սկսել է ետք, վեհափառ հայրապետը հետեւեալ երեք հաստատումները կատարեց. Առաջին՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ, ՄԵՐ ԱՄԲՈՂԱԶ ԱԶԳԸ ՔԵԶԻ՝ ՀԵՏ Է: Երկրորդ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՉՕՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒ ՍՓԻՒՌՔԻՆ ՀՉՕՐԱՑՈՒՄՆ Է: Երրորդ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ Է, ԱՅՈ՛՛, ՍԱԿԱՅՆ ԴԵՄ Է՝ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ՉԱՐԱՇԱՐՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ: Իւրաքանչիւրին անդրադառնալէ ետք վեհափառ հայրապետը Լիբանանի հայութեան վերականգնումը նկատեց համազգային ծրագիր ու մասնակցութիւն: Վեհափառ հայրապետը իր պատգամին մէջ շեշտեց. «Լիբանանը միշտ կը մայր սփիւռքի մէջ իր առանցքային դերակատարութեամբ կարելուր համայնք, համահայկական աշխատանքներուն ու տեւականներուն կարելուր ներդրում կատարած ու կատարելու կոչուած գաղութ, հետեւաբար անոր վերականգնումը պետք է ըլլայ միասնական ճիգով»:

Պատարագի աւարտին վեհափառ հայրապետին Նախագահութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգիստ՝ Պէյրութի մէջ պատահած պայթումին հետեւանքով Նահատակուած հայորդիներու հոգիներուն համար:

ԱԶԳԸ ՔԵԶԻ՝ ՀԵՏ Է՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Սոյն գրութիւնը խտացումն է կիրակի, 9 օգոստոս Անթիլիասի մայր տաճարին մէջ Արամ Ա. վեհափառ հայրապետի պատգամին:

«Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ. յաղագս ամենայնի, Տէր, փա՛ռք քեզ»: Մեր ժողովուրդի զաւակները կը հրաւիրեմ մեր եկեղեցւոյ աղօթքին այս պարզ, սակայն խորիմաստ բառերով գոհութիւն ու փառք տալու մեր բոլորին Արարիչ Երկնաւոր Հօր: Միայն մեր դժուարութեան ու նեղութեան մէջ չդառնանք Աստուծոյ, այլ՝ միշտ: Փառք տանք Աստուծոյ մեր կեանքին, մեր ունեցած շնորհներուն, մեր կարելիութիւններուն ու յաջողութեան համար: Առանց Աստուծոյ պայծառակերպիչ ներկայութեան մեր կեանքը կը կորսնցնէ իր գոյութեան իմաստն ու նպատակը:

Այսօր, իմ հայրական պատգամիս մէջ կ'ուզեմ՝ երեք հաստատումներ կատարել, եւ ապա հակիրճ կերպով անդրադառնալ իւրաքանչիւրին:

Առաջին հաստատում. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ, ՄԵՐ ԱՄԲՈՂԱԶ ԱԶԳԸ ՔԵԶԻ՝ ՀԵՏ Է: Արդ, մի՛ յուսահատիր, այլ՝ հաւատա՛ ու մնացի՛ր վճռակամ եւ վերականգնումի յոյսով ու կամքով քալել՝ առաջ:

Իր դառն կացութեան ամենէն դժժան պայմանները կ'ապրի այսօր Լիբանանի հայութիւնը: Ո՛չ միայն ականջալուր եղանք պայթումին յառաջացուցած մահերուն, վիրաւորներուն ու քանդումներուն, այլ՝ Նաե՛՛ն՝ ականատես վկան: Ինչ որ տեսայ, վստահ եմ, որ եղածը շատ ատելին է. ինչ որ լսեցի տակաւին շատ ատելին կայ ըսելիք ու լսելիք: Փաստօրէն պատահածը սովորական պայթում մը չէր, այլ՝ օտարներուն վկայութեամբ Հերոշիմայէն յետոյ այլապէս Հերոշիմա մը: Որպէս Լիբանանի Նախկին առաջնորդ, 17 տարիներ պարծեմ եմ քաղաքացիական պատերազմի ամենէն ծանր օրերը: Ծառայած եմ մեր ժողովուրդին յաճախ հրթիռներու տակ ու ականներու մէջէն քալելով, Նոյնիսկ աչ ձեռքես փամփուշտ մը ստացած եմ: Այդ օրերուն Նաե՛՛ն ականատես եղած եմ ռմբակոծումներու պատճառած վնասներուն: Սակայն, ինչ որ պատահեցաւ քանի մը օրեր առաջ աննախընթաց էր՝ իր տարողութեամբ, ծաւալով եւ պատճառած զոհերով ու քանդումներով: Արդարեւ, Պէյրութէն դէպի հիւսիս, արեւելք եւ հարաւ տարածուող շրջաններուն ու Նաե՛՛ն Պէյրութի, Էշրեֆիէի, Մար Միսայելի, Հայաշէնի, Պուրճ Յամուտի, Հաճընի, Տորայի եւ միւնչէն «Թռչնոց բոյն» երկարող շրջաններու հայահոծ թաղերուն մէջ մահ ու սարսափ, քանդում ու աւեր տիրեց քանի մը վայրկեանի ընթացքին:

Այս դառն կացութեան դիմաց կարելի չէ չցաւիլ, չյուզուիլ եւ չպոռթկալ, թէ ինչո՛ւ նման ոճրային արարքներ տեղի կ'ունենան մարդ արարածներու կողմէ, գիտակցաբար կամ անգիտակցաբար: Ես ալ մեր ժողովուրդի զաւակներուն հետ ցաւեցայ եւ յուզուեցայ: Թող Աստուած իր երկնքի արքայութեան մէջ ընդունի մեր համայնքի եւ Լիբանանի բոլոր Նահատակներուն հոգիները: Թող Աստուած շուտափոյթ ապաքինում պարգեւէ բոլոր վիրաւորներուն:

Ժամանակը հասած է, որ այս դժուար օրերը շրջանցենք եւ սկսիք վերականգնումի գործընթացին: Կը վստահեցնեմ ձեզի, որ մեր ազգը ձեզի հետ՝ զօրակից, աջակից ու գործակից է ձեզի: Վերականգնումը, սիրելի՛ Լիբանանի հայութիւն, մեր կեանքին առջեւ բացուած միակ ճամբան է, ուրկէ մենք պիտի քալենք միասնաբար, ձեռք-ձեռքի, սիրտ-սիրտի, խոր հաւատքով, ամուր վճռակամութեամբ ու վառ տեսիլքով: Կը վստահեցնեմ ձեզի, որ մեր եկեղեցին, մեր միաբանութիւնը եւ ես անձնապէս պիտի քալենք ձեզի հետ միասին ու պիտի կատարենք ինչ կարելի է, որպէսզի շուտով Լիբանանի հայութիւնը դարմանէ իր վերքերը, ամոքէ իր ցաւը եւ վերահաստատէ իր առանցքային տեղն ու դերը մեր ազգի կեանքին մէջ:

Երկրորդ հաստատում. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՉՕՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒ ՍՓԻՒՌՔԻՆ ՀՉՕՐԱՑՈՒՄՆ Է: Սա լոյսնուգ չէ, զգացական արտայայտութիւն չէ, տեսական յղացք չէ, այլ՝ փաստացի իրականութիւն: Լիբանանի հայութիւնը անցնող տասնամեակներուն, մեր ազգի կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ վճռադրոշմ դեր ունեցած է. իսկ Յայաստանի վերանկախացումէն յետոյ, թե՛ Դարաբաղի ազատագրական պայքարին եւ թե՛ Յայաստանի հայրենաշինութեան մէջ իր նշանակաւից ներդրումն է կատարած: Ահա թէ ինչու, Լիբանանի հայութեան վերականգնումը համահայկական տազնապ, ծրագիր ու յանձնառութիւն պետք է դառնայ:

Այս սպասումէն մեկնած եւ այս տեսլականով, հայրապետական Մեր կոչին մէջ հրաւիրեցիք մեր ազգի բոլոր զաւակները ու բոլոր կառոյցները մասնակից դառնալու Լիբանանի հայութեան վերականգնումի հաւաքակալ աշխատանքներուն: Լիբանանի հայութիւնը տեսական թելադրանքներու կամ զգացական

արտայայտութիւններու կարիքը չունի, այլ՝ հրամայական ու անմիջական անհրաժեշտութիւնը ունի նիւթական աջակցութեան: Կարիքները բազմազան են ու այլազան: Լիբանանի հայութեան վերականգնումի աշխատանքը պիտի ըլլայ հաւաքաբար, միասնաբար եւ ծրագրուած ու հետեւողական կերպով՝ մասնակցութեամբ ու օժանդակութեամբ Հայաստանի ու Արցախի պետութեան եւ մեր ազգի բոլոր կազմակերպութիւններուն ու զաւակներուն: Այս լըոյթեամբ ու յանձնառութեամբ անհրաժեշտ է լծուիլ գործի:

Լիբանանի մէջ վերականգնումի աշխատանքը պիտի կատարուի երեք համայնքներու, կուսակցութիւններու ու բարեսիրական միութիւններու միասնական ճիգով: Աշխատանքները պետք է կատարուին ծրագրուած ձեւով, իսկ ստացուած գումարներուն գործածութիւնը՝ թափանցիկ ու պատասխանատու եւ համադրուած ու համարատու կերպով: Այս է իմ սպասումս: Մենք միշտ այսպէս գործած ենք որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն եւ այս մօտեցումով պիտի հետեւինք կատարուելիք աշխատանքներուն:

Այս առիթով իմ խոր գոհունակութիւնս կ'ուզեմ յայտնել, որ Հայաստանի ու սփիւռքի մեր պետական ու հոգեւոր բարձրաստիճան պատասխանատուները, մեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներն ու Նաե՛՛ն օտարներ իրենց զօրակցութիւնը յայտնեցին Լիբանանի հայութեան, ինչպէս Նաե՛՛ն իրենց պատրաստակամութիւնը՝ օժանդակութեան: Հայաստանի վարչապետը քիչ առաջ դարձեալ հեռաձայնեց եւ Հայաստանի կառավարութեան զօրակցութիւնը վերահաստատեց: Անհրաժեշտ է, որ թե՛ կատարուելիք նուիրատուութիւնները եւ թե՛ Լիբանանի մէջ կատարուելիք աշխատանքները պարագայական ըլլան, այլ ըլլան, կը շեշտեմ, ծրագրուած ու հետեւողական:

Երրորդ հաստատում. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ Է, ԱՅՈ՛՛, ՍԱԿԱՅՆ ԴԵՄ Է՝ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ՉԱՐԱՇԱՐՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ: Վերջին շուրջ վեց ամիսներու ընթացքին, յաջորդական երեք տազնապներ դիմագրաւեց Լիբանանը՝ Պաակաձե՛ն Ժահրի տարածում, տնտեսական տազնապի ստեղծում եւ այս վերջին պայթումը: Յստակօրէն կ'ուզեմ ընդգծել, թէ վերջին երկու տազնապներուն պատասխանատուները պետական պաշտօններ գրաւած անձերուն՝ իրենց պաշտօնին նկատմամբ ունեցած անպատասխանատու ու անպարկեշտ վերաբերումին, համարատուութեան պակասին եւ փտածութեան հետեւանք են:

Հարց կու տանք, ո՛րք է ժողովուրդին գումարը, որ վստահւած է դրամատուներուն. ինչպէ՛ս եւ ի՞նչ նպատակներու այդ գումարները գործածուեցան: Այսօր, ժողովուրդը գործնապէս իր գումարին սեփականատերը չէ: Ամիսներ կ'անցնին, սակայն ժողովուրդին դէմ գործուած մեղքին խոստովանութիւնը չի կատարուի, ժողովուրդին դրամը Հաիագործած կամ անփոյթ կերպով գործածած անձերը կամ կառոյցները պատասխանատուութեան չեն կանչուի: Ժողովուրդը հաշիւ կը պահանջէ:

Ինչ կը վերաբերի Նաահանգիստին մէջ պատահած ոճրային արարքին, հարց կու տանք, բոլո՛րս, ինչպէ՛ս տարիներ շարունակ մեծ քանակութեամբ պայթուցիկ ու թունալից նիւթեր կը պահուին առանց Նախագահական միջոցներու՝ քաջ գիտնալով անոնց վտանգալից ըլլալը: Սա ի՞նչ անբարոյ ու անխիղճ վերաբերում է իրենց պատասխանատուութեան նկատմամբ: Այս ահաւոր ոճիրին ետին կենդո անձերը ի՞նչ խիղճով կը դիտեն իրենց պատճառած մահերը, վիրաւորները, քանդումները... Ժողովուրդը հաշիւ կը պահանջէ եւ շուտով:

Միշտ ըսած ենք ու կը կրկնենք, եկեղեցին ժողովուրդին հետ է, իսկ եկեղեցականը, առաքելային բնորոշումով, Քրիստոսի դեսպանն է (Բ. Կր. 5:20): Ես չեմ կրնար լուռ մնալ ժողովուրդը եկեղեցոյ, ժողովուրդին տնտեսական կեանքը քանդող ու ապահովութիւնը վտանգող այս ոճիրներուն դիմաց: Զանի մը օրեր առաջ Լիբանանի Նախագահը յայտարարեց, թէ Լիբանանի դատարանները բաց պիտի ըլլան բոլորին առջեւ: Կը յուսանք ու կը սպասենք: Սակայն, վստահ եղեք, որ Լիբանանի դատարանները բաւարար տեղ պիտի չունենան դատեալները ընդունելու...

Լիբանանի ժողովուրդը ոտքի ելաւ, սակայն տակաւին ազնիւ կը գտնուի: Չգո՛ւշ, երբ ժողովուրդը վճռական կերպով փողոց իջնէ, փտածութեան մէջ խրած պատասխանատուներու աթոռները կը սկսին շարժիլ: Դիտեցե՛ք ազգերու անցեալի ու ներկայի պատմութիւնը: Ժողովուրդը ենթակայ չէ պետական մարդոց, այլ՝ պետական մարդիկը իրենք ենթակայ են ու համարատու գիրենք ընտրող ժողովուրդին, եւ բոլորս ենթակայ ենք երկրին օրէնքներուն: Հետեւաբար, Մենք կը պահանջենք, որ Լիբանանի տնտեսական վատառողջ կացութիւնը շուտով իր լուծման ընթացքը գտնէ, ինչպէս Նաե՛՛ն Պէյրութի պայթումին ետին գտնուող անձերը խստագոյն պատիժը կրեն:

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, եկեք դարձեալ ու միշտ դառնանք Աստուծոյ եւ մեր եկեղեցւոյ աղօթքին բառերով ըսենք. «ՏԷ՛ր, երես մի՛ դարձ-ներ մեզմէ: Տէր բարերար, կ'աղաչենք, օգնական՝ եղիր մեզի: Կը խնդրենք, որ խաղաղութեան հրէշտակդ որկէս, որպէսզի մեզի պահպանէ փորձութիւններէ: Ամենակալ Տէր Աստուած մեր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի. Ամէն»:

«ԱԶԳԱԿ»Ի ՀՆՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.-
(01)258526, (01)260115 եւ (01)241274:

Ճոնսըն շեշտեց, որ Բրիտանիա պատրաստ է Լիբանանին բժշկական պիտույք ուղարկելու, ինչպես նաեւ Պեյրուքի նաւահանգիստին եւ վնասուած բնակարաններուն վերակառուցման օժանդակելու:

Միւս կողմէ, երեկ կէսօրէ ետք Սայտայի նահանգիստ հասան ցորեն փոխադրող երկու նաւեր:

«ԿԸ ՀԱՄԱՏԱՄ ՄԵԿ ԲԱՆԻ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԱՊՐԻ, ՀՈՍ...»

Շարունակուած Ա. Էջէն

Յարցագրոյցի ընթացքին երեսփոխան Բագրատունի անդրադարձաւ նաեւ քաղաքական վիճակին եւ միջազգա- յին ազդեցութեան:

Յարցագոյցը վարեց Լորիկ Սապունճեան:

«Օ. ԹԻ. ՎԻ.». - *Տեղի ունեցած աղետն ու արձանագրուած մարդկային եւ նիւթական կորուստները այնքան մեծ են, որ մեզ անխօս կը ձգեն: Այսօր խօսքէն աւելի գործի ժամանակ է. նախ եւ առաջ անցած ըլլայ բոլորին. մեր խորին ցաւակ- ցութիւնները՝ բոլոր զոհերու ընտանիքներուն եւ համայն Լիբանանի ժողովուրդին:*

Երբ դէպքը տեղի ունեցաւ, դուք կը գտնուէիք Պէյթ Ըլ Ուսասթ եւ նախկին վարչապետ Սաատ Յարիրիի հետ հանդիպում կ'ունենայիք: Յաղորդուած առաջին լուրերը նշեցին, որ պայթումը թիրախ ունեցած է Պէյթ Ըլ Ուսասթը, բայց բարեբախտաբար անմիջապէս տեսանք, որ այդպէս չէր: Դժբախտաբար, չէինք գիտեր պատահածին տարողու- թիւնը: Նախ, ինչո՞ւ. Պէյթ Ըլ Ուսասթ էիք, ի՞նչ տեղի կ'ունե- նար այդ պահուն:

ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.- Մեկնելով լիբանանեան բոլոր կողմերուն հետ մեր յարաբերութիւնները պահելու եւ խօ- սակից ըլլալու սկզբունքէն, ինչպէս նաեւ նկատի ունենալով նախկին վարչապետ Սաատ Յարիրիի ծանրութիւնը լիբա- նանեան քաղաքականութեան մէջ, անհրաժեշտ տեսանք, որ անպայման իրեն հետ հանդիպում մը ունենանք: Առաջին հանդիպումը չէր ասիկա, բայց շատ լաւ էր. անոր պնդումով քիչ մը երկարեցաւ հանդիպումը բարեբախտաբար, որով- հետեւ եթէ ճամբան ըլլայինք, թերեւս այլ բան կը պատա- հէր: Առաջին պայթումը երբ եղաւ, անկեղծ ըսեմ, մենք ստիպուեցանք անոր հետ միասին գետին պառկիլ: Երկ- րորդ պայթումին արդէն, բաւական բան ինկած էր մեր վրայ: Ընկերակիցները եկան եւ հանեցին, մեզ գետնին տա- կը տեղ մը իջեցուցին, որմէ ետք, երբ ստուգուեցաւ, որ թի- րախաւորուածը Սաատ Յարիրին եւ իր կեդրոնը չեն, դուրս ելանք: 10-12 վայրկեան ետք ես յայտարարութիւն մը ըրի, որ ողջ ենք:

«Պէտք է ըսել, որ աղետ էր: Այն ինչ որ ես տեսայ դէպի Պուրճ Յամուտ վերադառնալուս ընթացքին, պատերազմի օրերուն չէինք տեսած այսքան քան- դում»:

Սակայն պէտք է ըսել, որ աղետ էր: Այն ինչ որ ես տեսայ դէպի Պուրճ Յամուտ վերադառնալուս ընթացքին, պատե- րազմի օրերուն չէինք տեսած այսքան քանդում: Գիտեք, քանի մը վայրկեանի մէջ եղած քանդումի մը վնասները շատ աւելի ահաւոր կ'ըլլան: Ամէն պարագայի՝ եղաւ: Բնա- կանաբար մեր առաջին ցաւը կ'երթայ նահատակներուն, բոլոր նահատակներուն: Դժբախտաբար շուրջ 6000 վիրա-ւոր եւ տակաւին կորսուած մարմիններ կան, որոնց ողջ գտնելը կը կարծած այլեւս անկարելի է: Առաջին առիթով մխիթարանք՝ նահատակներու պարագաներուն, վիրաւոր- ներուն՝ բարի ապաքինում եւ մնացեալը՝ գործ եւ վերա- կանգնում:

«Առաջին առիթով մխիթարանք՝ նահատակնե- րու պարագաներուն, վիրաւորներուն՝ բարի ապաքինում եւ մնացեալը՝ գործ եւ վերականգ- նում»:

«Օ. ԹԻ. ՎԻ.». - *Եկեք անդրադառնանք քաղաքական առանցքին, սկսինք նախ վերականգնումով եւ օժանդակու- թեամբ: Ըսիք նաեւ, որ կան անյայտ կորսուածներ, շատեր կը հարցնեն, թէ արդեօք մեր նահատակներու թիւը 11 է, թե՞ աւելի. շատեր կը հարցնեն, թէ տակաւին կա՞ն կորսուած- ներ: Կեդրոնականք վերականգնման աշխատանքներուն վրայ, ինչպէս նաեւ լիբանանահայ երեք յարանուանութիւ- ներու եւ քաղաքական երեք կուսակցութիւններու մասնակ- ցութեամբ տեղի ունեցած հանդիպումին մասին, որ տեղի ունեցաւ Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէեան- Եռագոյն» սրահին մէջ:*

Յ. Բ.- Վերջին տեղեկութիւններուն համաձայն, հայ նա- հատակներուն թիւը 13 է: Վերջինը քոյր Սոֆի Խսրովեանն է: Կորսուածներու պարագային, մենք տեղեկութիւն չու- ինքք: Ոչ ոք մեզի դիմած է, մենք տեղեակ չենք, որ կորսը- լած կայ, եւ կ'արօթենք, որ ըլլայ: Վիրաւորները ապաւն- ման մէջ են, առաջին օրուան այդ արագ դարմանումէն ետք, տեսանք արդէն հիւանդանոցներու վիճակը ինչպիսին էր եւ թէ ինչպէ՛ս առանց թմրեցուցիչի վիրահատութիւններ եղան, բակերու մէջ վերքեր կարուեցան, յաջորդող օրերուն մեր դարմանատուները եկան մարդիկ եւ իրենց այդ կէս կա- տար վիրակապերը վերանորոգեցին եւ վերադարմանուե- ցան:

«Առաջին սփոփեցուցիչ երեւոյթը այն էր, որ Արամ Ա. կաթողիկոսը եղաւ առաջին կրօնապե- տը, որ աղետէն մէկ ժամ վերջ արդէն իր ժողովուր- դին հետը եղաւ»:

Ըսեմ, որ այնքան մեծ են աւերն ու աղետը, որ երբեմն եթէ յուզուիք, թող ներեն մեզ հետեւողները: Այնքան մեծ է արհաւիրքը, որ այլեւս բնական ձեւով մտածելու եւ բնական ձեւով զգալու փուլը անցած ենք: Առաջին սփոփեցուցիչ երեւոյթը այն էր, որ Արամ Ա. կաթողիկոսը եղաւ առաջին կրօնապետը, որ աղետէն մէկ ժամ վերջ արդէն իր ժողո- վուրդին հետը եղաւ: Ան տեղեակ ալ չէր պահած, որ պիտի հասնի Պուրճ Յամուտ: Առանց աղմուկի, առանց հեռատե-

սիլի, առանց յայտարարութիւններու այս այցելութեան ըն- թացքին անոր յուզումը զգալի էր, մոռցած էր վանքին մէջ պատահած աղետները, եկած էր իր ժողովուրդին հետ ըլլա- լու, եւ որովհետեւ ահռելի էին ճամբաները, կարելիութիւնը չունէր նաեւ Էշրեֆիէ, Ժեիթաուի, Մար Մըխայել, Խալիլ Պե- տեյի եւ Յաճըն հասնիլ, գոց էին ճամբաները: Ան մինչեւ հի- մա այդ դժուարութեան մէջ է, թէ ինչպէ՛ս չկրցաւ երթալ հոն: Մենք Նոյն օրը կոչ ուղղեցինք «Օ. ԹԻ. ՎԻ.».»-Էն համայն աշ- խարհին. արդէն վեհափառը պատրաստութիւններու մէջ էր, իր յայտարարութիւնը ըրաւ, իր կոչը ուղղեց համայն աշ- խարհին, համայն հայութեան, Յայաստանին, Արցախին, ուր որ հայ կայ, որ պէտք է հասնին Լիբանանին, որովհետեւ այսօր առաջնահերթութիւնը Լիբանանի հայութիւնն է: Կազմուեցաւ յանձնախումբ, որ երէկ իր առաջին նիստը ու- նեցաւ Ազգային առաջնորդարանին մէջ: Այդ նիստին մաս-

«Գաղութի կեանքին վերականգնումը, կառոյց- ներու վերականգնումը մէկ-երկու օրուան խնդիր չէ, այլ գաղութի, լիբանանահայութեան գոյատեւ- ման խնդիր է»:

Նակցեցան առաջնորդ սրբազան հայրը իր նախագահու- թեամբ, Պէյրութի Յայ կաթողիկէ պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս Գեորգ եպօ. Ասատուրեանը, վեր. Փոլ Յայտոսթեանը, երեք կուսակցութիւններու ներկայա- ցուցիչները առաջին դէմքերով, երեք բարեսիրական միու- թիւններ, Լիբանանահայ օգնութեան խաչը, Յայ կրթական- բարեսիրական եւ Յայկական բարեգործական ընդհանուր միութիւնները, այլ խօսքով՝ ներկայացուցչական իմաստով լիբանանահայութիւնը ամբողջ, կազմուած մարմինն անու- նը եղաւ՝ Լիբանանահայութեան վերականգման մարմին, որ շատ արագ իսկ պիտի սկսի իր գործունեութեան: Պա- հանքը այն էր, որ վերականգնման գործունեութիւնները շատ արագ սկսին, առաջնահերթութիւնը պիտի ըլլայ ժողո- վուրդին անմիջական կարիքները, շինարարութիւն, ուտես- տղէն, երկրորդը՝ բնակարաններու հարցը, երրորդը՝ կրթական հարցը. չմոռնանք, որ գաղութի կեանքին վերա- կանգնումը, կառոյցներու վերականգնումը մէկ-երկու օր-ւան խնդիր չէ, այլ գաղութի, լիբանանահայութեան գոյա- տեման խնդիր է: Ծիշդ է, որ աճապարանքի մէջ ենք, ճիշդ է, որ կարելի չէ ժամանակ կորսնցնել. մարմինը վաղն իսկ արդէն առաջին ժողովը պիտի գումարէ եւ պիտի դիմէ հա- մապատասխան միջոցառումներու, որոնց բոլորս պարտա-ւոր ենք զօրակցիլ. նիստին ներկայ էի եւ ըսի, որ Դաշնակ- ցութիւնը իր բոլոր կարողականութիւնը եւ կարելիութիւննե-րը ի սպաս պիտի դնէ այս մարմնին:

«Դաշնակցութիւնը իր բոլոր կարողականու- թիւնը եւ կարելիութիւնները ի սպաս պիտի դնէ Լիբանանահայութեան վերականգման մարմնին»:

Հիմնականը այսօր հայ մարդուն անվտանգութիւնն է, հայ ընտանիքին ապահովութիւնն է. նախընտրելի եւ անհը- ռաժեշտ է, որ նախ հայ ընտանիքը եւ հայ անհատը ապա- հովուին, եւ ետքը կը կառուցենք այն, ինչ որ քանդուեցաւ եկեղեցիներուն, ակումբներուն եւ միութիւններուն մէջ: Մենք կրնանք առանց առաստաղի մնալ, կրնանք սպասել, որ պատուհանները շինուին, բայց մենք կ'ուզենք նախ, որ մեր ժողովուրդը կարենայ ինքզինք ապահովել՝ մասնակ- ցութեամբ Լիբանանահայութեան վերականգնումի մարմի- նին:

«Օ. ԹԻ. ՎԻ.». - *Այսինքն՝ այս մարմինը վաղուքնէ սկսեալ հաղորդագրութիւններով մեր ժողովուրդին տեղեակ պիտի պահէ իր ընդհանրական շատեր: Արդէն ապրուստի դժուար- ութիւններ կայ, իսկ հիմա մարդիկ տուն չունին, ապահով եր- դիք չունին: Աշխարհի տարբեր կողմերէն կը կապուին՝ ըսե- լու համար, թէ ինչպէ՛ս կրնան գումար փոխանցել: Ընկերա- յին հաղորդակցութեան ցանցերու վրայ արդէն կը տեսնեք, թէ որամահաւքներ սկսած են: Կայ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան յատուկ հաշուեհամարը, որ հիմնա- կանն է, կայ նաեւ ԴՕՄ-ի նախաձեռնած դրամահաւաքը: Լիբանանահայութեան վերականգնման մարմինը պիտի ու- նենա՞յ իր հաշուեհամարը:*

Յ. Բ.- Հիմնականին մէջ մեր փափաքն է, որ Կիլիկիոյ կա- թողիկոսութեան ժընեւի հաշուեհամարին փոխանցուին գումարները: Շատ բնական է, որ իւրաքանչիւր միութիւն, իւրաքանչիւր կազմակերպութիւն պիտի չզարդի աշխատե- լէ, որովհետեւ ամէն մարդ իր շրջանակը ունի, իր համակիր- ները ունի, դուրսէն ամէն անհատի համար սրտին խօսող վայր մը կայ, դպրոց մը, միութիւն մը, կառոյց մը, հաստա- տութիւն մը: Ատիկա չենք կրնար արգիլել, տրամաբանա- կան չէ արգիլելը: Վստահ, որ լիբանանահայութեան վերա- կանգնումի մարմինը պիտի մտածէ իր հաշուեհամարը ու- նենալ: Ըսեմ նաեւ, որ կան անձնական նախաձեռնութիւն- ներ, ո՞չ միայն դրամական իմաստով, այլ ապրանքատեսա- կի. մեզի հետ կապուեցան բարեկամներ Ժընեւէն, Կիպրոս- մէն, Ֆրանսայէն, Միացեալ Նահանգներէն՝ հարցնելով, թէ արդեօք որեւէ բանի կարիքը ունի՞րք: Գիտեք, երբ խուճա- պային մթնոլորտի մէջ կ'ըլլանք, կը կարծենք, որ ինչքա՛ն ապրանք բերենք, օգտակար է, բայց յանկարծ կրնան նաեւ հասնիլ այնպիսի ապրանքներ, որոնք անգործածելի կրնան դառնալ ժամանակի ընթացքին, օրինակ՝ ժամանակը լրա- նալուն շատ մօտիկ թուականներով դեղորայք կրնան դրկել կամ մեծ քանակութեամբ ուտեստեղէն, որ յանկարծ մթերե- լը դժուար ըլլայ: Այս բոլորը բնականաբար ժամանակի ըն- թացքին պիտի լուծուին: Կան անհատական նախաձեռնու- թիւններ, որոնք հասկնալի եւ ըմբռնելի են. մարդիկ կան, որոնք թերեւս վստահութիւն չունին միութիւններուն, կու- սակցութիւններուն վրայ կամ կ'ուզեն ուղղակի թիրախա-

ւորուած կերպով տասը ծանօթ ընտանիքի օգնել: Հիմնա- կանը սակայն այս անհատական աշխատանքներուն մէջ այն է, որ ոչ հայերէ ալ գումարներ գան, որովհետեւ խնդի-

«Մենք այսօր խնդիր ունինք Լիբանանի հայու- թիւնը վերականգնելու: Ատկէ անդին, հաւատա- ցե՛ք, ատկէ անդին մտածելը եւ գործելը ազգային դաւաճանութիւն է»:

րը միայն հայը հայուն օգնելու խնդիր չէ, այնպէս ինչպէս «Ջորոնա»-ի առիթով հեռառեսիլի կայանէ մը դրամահա-ւաքին բաւական թիւով հայեր պետական Կարմիր խաչին կամ այլ հաստատութիւններու նուիրատուութիւն ըրին: Մե-զի համար այս օժանդակութիւնները խիստ կարեւոր են. անհրաժեշտ է գիտնալ նաեւ, որ բացառիկ թափանցիկու- թիւն պէտք է այս բոլորին մէջ: Թափանցիկութիւն առաջին վայրկեանէն, եկած գումարներուն հասցէները, որոնցմե՞ կու գան, ո՞ր հասցէին կ'երթան, որովհետեւ ըսի-ըսաւները այնքան շատ են, պղտոր ջուրին մէջ ձուկ որսացողները եւ չարախօսները այնքան շատ են, ընկերային հաղորդակցու- թեան ցանցերու վրայ մէկու մը 10 տարուան յայտարարու- թիւնը մէջտեղ կը դնեն, կը տարածեն. այս բոլորը կը հասկը- նանք, բայց իմ խնդրանքս է բոլորէն, այսօր քաղաքական հաշիւներ լուծելու ժամանակը չէ, մրցակցութեան ժամա- նակը չէ, մրցակցութիւն կրնանք ընել միայն յաւելեալ օժան- դակութիւն բերելու գործին մէջ: Աւելի մեծ գումար ապահո- վելը պէտք չէ երբեք նշանակէ, որ այն կը ներդրուի քաղա- քական հաշիւին մէջ, քաղաքական կամ ընտրական շահեր ապահովելու նպատակով. հոն չենք: Մենք այսօր խնդիր ու- նինք Լիբանանի հայութիւնը վերականգնելու: Ատկէ ան-

«Տղաքը, որ գործի անցան եւ օգնութեան հա- սան, իրենց անձնական վիրաւորները ունեին իրենց տուններուն մէջ, հակառակ անոր, անմիջա- կան իրենց պարագան բուժելէ, դարմանելէ ետք, ձգեցին ապակիները գետին, եկան ակումբներ եւ ամէն տեղ՝ օգնութեան փութալու»:

դին, հաւատացե՛ք, ատկէ անդին մտածելը եւ գործելը ազ-գային դաւաճանութիւն է: Մենք չենք կրնար այսօր օգտուիլ մարդոց տառապանքէն, ցաւէն, սեւ հագուստէն եւ ըսել, որ ես կրնամ 100 տուփ աւելի բերել: Ի միջի այլոց այդ 100 տու- փը հայութեան անուով առած կ'ըլլան ծանօթ երեսփոխա- նէ մը, որ կը զարմանայ, թէ ինչպէ՛ս չէ հասած, մինչ ուրիշ տեղեր բաժնուած է, բայց որովհետեւ ժողովուրդը դժուա- րութեան մէջ է, կը նկարենք, ինչքան շատ նկարենք, այն- քան շատ քաղաքական կարեւորութիւն կը ստանանք. մեր ասանդութիւնները քանդած ենք այս իմաստով, բայց որով- հետեւ ընկերային ցանցերը կան եւ մարդիկ կ'ուզեն տես- նել՝ ո՞ր տունը գացած ես, ո՞ր մարդուն, ո՞ր կնոջ, ո՞ր ծերու- կին օգնած ես, դէմքը կամ տունը նկարած ես, բայց այսօր հոն չենք, այսօր Լիբանանի հայութիւնը պիտի փրկենք: Փրկելու համար պիտի լռենք, փրկելու համար քաղաքական մրցակցութիւն պիտի չընենք, միութեանական մրցակցութիւն պիտի չընենք, երեւնալու մրցակցութիւն պիտի չընենք, այլ՝ հիմնականին մէջ լուրջ կերպով պիտի աշխատինք, որովհե- տեւ եթէ գաղութը չմնայ, ո՞չ ես կը մնամ, ո՞չ ուրիշներ կը մնան: Ի դէպ չկարծենք, որ կ'ուզենք, որ այսօր գաղութը մնայ, որպէսզի երկու տարի վերջ եթէ երեսփոխանական ընտրութիւններ ըլլան, կարենանք վերընտրուիլ կամ քուէ ստանալ: Ատիկա չէ կարեւորը, «Ջորոնա»-ի օրերուն մեր շտապը յայտարարեց, որ այս մարմինը Դաշնակցութեան կողմէ կազմուեցաւ, բայց համայն հայութեան համար է. ոչ մէկ հայ կրնայ ըսել, որ եթէ «Ջորոնա»-ով վարակուեցաւ եւ մեզի դիմեց, մենք տարբերութիւն որինք կամ Նոյնիսկ հար- ցուցինք, թէ ի՞նչ կուսակցութեան կը պատկանի: Մեր խնդի- րը այդ չէ, ո՞չ քաղաքական, ո՞չ յարանապական, ո՞չ գա- ղափարական, ո՞չ կուսակցական իմաստով: Բաշխումը եղաւ արդար, օժանդակութիւնները եղան արդար, հե- տաքրքրուածութիւնը եղաւ արդար եւ այդպէս պէտք է ըլ- լար, այդպէս ալ պիտի շարունակենք:

«Օ. ԹԻ. ՎԻ.». - *Այնքան մեծ է ցաւը եւ այնքան շատ են կարիքները, որ կը կարծենք միայն գործով կարելի է փա- տել այս բոլորը: Խօսք մըն ալ ըսենք այն կամաւորներուն, սկաւուտներուն, երիտասարդներուն, ուսանողներուն, որոնք իրենց վնասուած, աւերուած տուները ձգեցին եւ իջան կարիքաւորին ձեռք երկարելու: Իսկապէս շատ գեղե- ցիկ պատկերներ էին, որոնք անցնող օրերուն ականատես եղանք:*

Յ. Բ.- Երբ դէպքը պատահեցաւ եւ ես կը վերադառնայի, ծանօթ մը հեռաձայնեք եւ ըսաւ, որ մայրը կը մահանայ, օգ- նութեան հասնինք: Անմիջապէս «Ազատամարտ»-ի մեր հերթապահ ընկերոջ հեռաձայնեցի, որ արցունքաւ աչքե- րով ըսաւ. «Ընկե՛ր, աղջիկս վիրաւորուած է, տունս քանդը-ւած է»։ Տղաքը, որ գործի անցան եւ օգնութեան հասան, իրենց անձնական վիրաւորները ունեին իրենց տուններուն մէջ, հակառակ անոր, անմիջական իրենց պարագան բու- ժելէ, դարմանելէ ետք, ձգեցին ապակիները գետին, եկան ակումբներ եւ ամէն տեղ՝ օգնութեան փութալու: Այդ տեսա- րանը արդէն կորովդ կը բարձրացնէ. երբ օրէ հեռաձայն- ները չեն կենար, ոչ թէ դրամի համար, այլ պարզապէս ըսե- լու, որ մենք ձեր կողքին ենք. ժպիտով կամ ցաւով ըսուածը այնքան կորով եւ խիզախութիւն կու տայ մեզի, որ մենք մնալու եւ գոյատեւելու մտք ամրութիւնը աւելիով պաշտ- պանենք:

«Օ. ԹԻ. ՎԻ.». - *Անցինք քաղաքական կողմին: Չայրոյթը եւ ցասումը այնքան մեծ են, որ բոլորը կ'ըսեն, որ անոնք, որոնք մահացան այս արկածին, նահատակներ չեն, այլ գո- հեր են, որոնք պէտք չէ մահանային, պէտք չէ բաժնուէին*

այս կեանքէն. բոլորս գիտենք Կեդրոնական Պէյրութի մէջ տեղի ունեցած դէպքերէն, ընկերային հաղորդակցութեան ցանցերու վրայ եղած հրապարակումներէն, որ որոշ մթնոլորտ մը կայ երկրին մէջ: Երէկ Փաղանգաւոր կուսակցութիւնը յայտարարեց, որ երեք երեսփոխաններով կը հրաժարի խորհրդարանէն, նաեւ ուրիշներ ալ նման քայլերու կրնան դիմել: 3այորդիներ կան, որոնք ընկերային հաղորդակցութեան ցանցերուն վրայ անձնապէս ձեր հրաժարականը, ինչպէս նաեւ խորհրդարանին մէջ հայկական համայնքը ներկայացնող երկու երեսփոխաններու՝ Յակոբ Թերզեանի եւ Ալէքսան Մաթոսեանի հրաժարականները պահանջեցին: Այսօր ի՞նչ ունիք ըսելիք այս գծով:

Յ. Բ.- Մեր երեսփոխանները ընտրուած են մեր ժողովուրդին քուէով: Ընտրուած են, որպէսզի պատասխանատուութիւն վերցնեն, տագնապի եւ խուճապի մէջ քաղաքական որոշում չի տրուիր, նման հարցեր շատ ծանրակշիռ խնդիրներ են: Քիչ առաջ ըսի, որ պահը քաղաքական հաշիւներ մաքրելու պահ չէ.

«Մեր երեսփոխանները ընտրուած են մեր ժողովուրդին քուէով: Ընտրուած են, որպէսզի պատասխանատուութիւն վերցնեն, տագնապի եւ խուճապի մէջ քաղաքական որոշում չի տրուիր, նման հարցեր շատ ծանրակշիռ խնդիրներ են: Պահը քաղաքական հաշիւներ մաքրելու պահ չէ»:

Եթէ մէկը զիս չի սիրեր եւ չէ քուեարկած ու կը պահանջէ, որ հրաժարիմ, կը հասկնամ: Ուրիշ մը, որ թեկնածու է իր հոգիին մէջ եւ կ’ուզէ հրաժարիմ, որ իմ տեղս առնէ, այդ ալ կը հասկընամ: Մեր եւ մեր նախարարին՝ Վարդինէ Օհանեան-Գեորգեանի գործը (ի դէպ՝ կը յիշեմ, որ ասիկա ընտրական մեր միթիսկնէրուն ըսած եմ) երկու ուղղութիւն ունի: Իբրեւ լիբանանցի երեսփոխան՝ մենք պարտաւոր ենք Լիբանանի շահերը պաշտպանելու, իբրեւ հայ երեսփոխան՝ մենք պարտաւոր ենք Լիբանանի հայութեան, մեր այս համախմբուած ուժը պաշտպանելու: Օրինակ՝ երէկ իրիկուն փողոցը «Օթէլ Կրէլ»-ը այրեց, որուն տերը ո՛չ քաղաքական, ո՛չ ալ պետական մարդ է, զբօսաշրջութեան մարզի մարդ մըն է. քանդումի վրայ քանդում աւելցնելը, ըմբռնելով անշուշտ գայրոյթի արտայայտութիւնը, մտածել կու տայ, որ երկիրը ո՛ր կրնայ երթալ: Երեսփոխաններ հրաժարեցան, իրենց

«Մենք այն տեսակը չենք, որ պատասխանատուութենէ խուսափինք, մեզի վստահուած է այս բեռը շալկել»:

ընտրանքն է ատիկա: Նախարարներ հրաժարեցան, բայց ուրիշներ պիտի չհրաժարին, գէթ տեսանելի ապագային մէջ: Թեւ այդ իրենց ընտրանքն է: Մեր կարծիքով՝ մենք պատասխանատուութենէ փախչողը չենք, Նոյնիսկ եթէ մեզ այպանեն, որ բաժին ունինք նաւահանգիստի պայթումին մէջ: Բաժին չուինք. այո՛, դէպքը այս կառավարութեան, այս խորհրդարանի օրով եղաւ, բայց այս հարցերը խորհրդարան չէին գար, այս հարցերը կառավարութիւններու հետ կապուած են. անկեղծօրէն կ’ըսենք, որ մենք այն տեսակը չենք, որ պատասխանա-

«Մենք այս ժողովուրդը պաշտպանելէ չենք հեռանար: Ո՛չ մեր երեսփոխանները, ո՛չ ալ մեր նախարարը, որ բացառիկ գործ ըրաւ վեց ամիսներու ընթացքին մեր համայնքի իրաւունքներու պաշտպանութեան իմաստով»:

տուութենէ խուսափինք, մեզի վստահուած է այս բեռը շալկել, չեմ կարծեր, որ այս բեռը այս օրերուն շալկելը շատ հաճելի բան է, չեմ կարծեր, որ այս բեռը շալկելը մարդոց համար պատուաբեր երեւոյթ է, եթէ կը կարծեն, որ առաջին կարգ նստիլը հաճոյք է կամ փողոց քլաւած ատենը մէկու մը բարեւ տալը հաճոյք է, թող գիտնան նաեւ, որ այնքան անարգանք կայ, վարկաբեկում կայ, այնքան մեր արժանապատուութիւնը գետին գարնել կայ,

«Այսօր քաջութիւն կ’ուզէ գործի վրայ մնալը, ամենն դիւրինն է ըսել՝ չկրցայ, տուն կ’երթամ. չձգեցին, տուն կ’երթամ»:

որ եթէ այսօր խորհրդարանական ընտրութիւններու խնդիր դրուի, կրնայ ըլլալ, որ բազմաթիւ երեսփոխաններ չուզեն թեկնածու ներկայանալ: Մենք այս ժողովուրդը պաշտպանելէ չենք հեռանար: Ո՛չ մեր երեսփոխանները, ո՛չ ալ մեր նախարարը, որ բացառիկ գործ ըրաւ վեց ամիսներու ընթացքին մեր համայնքի իրաւունքներու պաշտպանութեան իմաստով, այն ինչ որ կարելի է՝ երիտասարդութեան կամ մարմնակրթութեան մարզերուն մէջ ըրաւ, եւ այո՛, ցաւի մէջ է, որ կառավարութիւնը այսօր այս վիճակին մէջ է, բայց տրամադիր չէ եւ չի կրնար պատասխանատուութենէ խուսափիլ, որովհետեւ ինք այդ տեսակը չէ, հակառակ անոր, որ կը կորսնցնէ իր բարեկամներն ու բարեկամուհիները, իր մօտիկներ, բայց այսօր քաջութիւն կ’ուզէ գործի վրայ մնալը, ամենէն դիւրինն է ըսել՝ չկրցայ, տուն կ’երթամ. չձգեցին, տուն կ’երթամ:

«Օ. ԹԻ. ՎԻ.».- Վարչապետը երէկ խօսեցաւ ընտրական օրէնքի սոր առաջարկ ներկայացնելու մասին: Արդեօք տեղեա՛կ էք ի՛նչ պիտի ըլլայ, ինչի՛ մասին է, կրնա՛յ ըլլալ, որ խորհրդարանական կանխահաւ ընտրութիւններ ըլլան:

Յ. Բ.- Վարչապետը կանխահաւ ընտրութիւններու մասին

խօսեցաւ, այո՛, ասկէ առաջ ալ խօսած է, խորհրդարանին մէջ արտայայտուած է, նորութիւն չէ, վաղը կառավարութեան նիստ պիտի ըլլայ վարչապետարանին մէջ: Կանխահաւ ընտրութիւններու հարցը երկու լուծում ունի. կառավարութիւնը կ’որոշէ, կը ներկայացնէ խորհրդարան, խորհրդարանը կրնայ ընդունիլ կամ ոչ, երկրորդ՝ կառավարութիւնը կրնայ հրաժարիլ, բան չի փոխուիր կացութենէն: Կառավարութիւնը կը մնայ մինչեւ նորի մը կազմութիւնը: Մենք գիտենք, թէ կառավարութիւնները ինչքա՛ն դժուար կը կազմուին: Տագնապը աւելի կը սրի, եթէ ուզւածը տագնապի սրումն է եւ մարդոց աւելի անօթենալը, որպէսզի այլ պետութիւններ գան եւ իրենց իշխանութիւնները տարածեն երկրին մէջ. այո՛, բայց կառավարութիւնը կը մնայ իբրեւ ընթացիկ աշխատանքները վարող կառավարութիւն. չեմ գիտեր ամերիկեան տոլարի արժէքը ինչ կ’ըլլայ, բայց տագնապը հաստատ չի լուծուիր: Պատերազմի ընթացքին միակ օրինական հաստատութիւնը, որ մնաց, խորհրդարանն էր: Կարելի չէ պարզապէս անմիջական ազդեցութեան տակ, չեմ ուզեր ըսել ամբոխահաճոյ թուելու համար, մարդիկ հրաժարին իրենց պատասխանատուութենէն, հակառակ անոր որ վաղը եթէ ընտրութիւն ըլլայ, Նոյն անհատները դարձեալ պիտի ներկայանան՝ գիտնալով հանդերձ, որ երկրին մէջ քաղաքական իմաստով ոչինչ փոխուած է:

«Օ. ԹԻ. ՎԻ.».- Խորհրդարանին մէջ կա՛ն արդեօք քաղաքական ուժեր, որոնք նախատեսած են հրաժարական ներկայացընել յառաջիկայ ժամերուն ընթացքին, տեղեկութիւններ ունի՞ք:

Յ. Բ.- Անկեղծօրէն Լիբանանեան ուժեր կուսակցութեան դեկավարը յայտարարութիւն մը ըրած է: Տեսէ՛ք, խորհրդարանը 64 երեսփոխանով կրնայ նիստ գումարել: 64 հոգի պէտք է հրաժարի, որպէսզի խորհրդարանը լուծարուի: Չեմ կարծեր, որ այս խորհրդարանէն 64 հոգի կը հրաժարի: Այս ձեւով երկիրը կը յայտնուի քաոսի մէջ, կը մատնուի անել կացութեան: Ոչ թէ կ’ուզենք երեսփոխան մնալ անպայման, ես չեմ մնար, ուրիշը կու գայ, խնդիրը այսպէս չէ: Խնդիրը այն է, որ պէտք է մտածենք քաոսի եւ նուազագոյն իմաստով այս հարցէն ելլելու մասին:

«Օ. ԹԻ. ՎԻ.».- Միջազգային գետնի վրայ տարբեր երկիրներուն դեկավարներ այսօր նաեւ հեռակապով հաղորդակցութիւններ կ’ունենան Լիբանանի օժանդակութեան համար, բնականաբար յստակ կ’երեւի Լիբանանի մէջ դերակատարութիւն ունենալու ազդակը: Թրքական պատուիրակութիւն մը եկաւ, տեսանք նաեւ, թէ տարբեր շրջաններու մէջ ինչպէս ծափողոյններով դիմաւորեցին այդ թրքական պատուիրակութիւնը: Դիտի՛ր ուզեմ խօսիւք նաեւ Լիբանանի մէջ օտար գործօնին մասին: Կ’ուզեմ նաեւ, որ Մաքրոնի այցելութեան եւ թրքական պատուիրակութեան մասին արժեւորում մըն ալ ընեք: Շատեր հարց տուին, թէ ինչո՛ւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպանատան մէջ, Մաքրոնի հետ հանդիպումին դուք ներկայ չէիք:

Յ. Բ.- Շատ պարզ ըսեմ՝ չէիք հրաւիրուած: Յաջորդ առաւօտ դեսպանին հետ կապուեցայ, եւ ներողութիւն խնդրեց, որ չենք հրաւիրուած, ըսաւ նաեւ, որ սեպտեմբեր 1-ին կը վերադառնայ: Ըսի. «Պարզ է, կ’երեւի դուք կը հրաւիրեք անոնց, որոնք երկրի քանդումին մասնակցած են, շնորհակալ ենք, որ մեզի չէիք հրաւիրած, որովհետեւ մենք քանդումին չէինք մասնակցած»:

Այո՛, միջազգային միջամտութիւններ կան, հիմնականին մէջ թրքական, որ ոչ անպայմանօրէն հակահայ իմաստով է, բայց այս առիթով պէտք է ուրիշներ գիտնան, թէ ի՛նչ է Թուրքիոյ դերակատարութիւնը Լիբանանի մէջ: Ամէն պարագայի անմեղ չէ, վերադարձ է նախկին օսմանեան երագին, տնտեսական շահեր

«Չէինք հրաւիրուած: Ֆրանսայի դեսպանին ըսի. «Պարզ է, կ’երեւի դուք կը հրաւիրեք անոնց, որոնք երկրի քանդումին մասնակցած են, շնորհակալ ենք, որ մեզի չէիք հրաւիրած, որովհետեւ մենք քանդումին չէինք մասնակցած»:

ապահովելուն: Երբ կը յայտարարէ, որ պատրաստ են նաւահանգիստը կառուցելու, կը մտածես, որ նաեւ կրնան իրենք մասնակից ըլլալ նաւահանգիստը քանդելու աշխատանքին. ամբաստանութիւն չէ ըրածս, սակայն ո՛չ պատահածը անմեղ էր, ո՛չ ալ յանկարծ այս երկիրներու մօտեցումը՝ տնտեսական

«Պէտք է ուրիշներ գիտնան, թէ ի՛նչ է Թուրքիոյ դերակատարութիւնը Լիբանանի մէջ: Ամէն պարագայի անմեղ չէ, վերադարձ է նախկին օսմանեան երագին, տնտեսական շահեր ապահովելուն»:

օժանդակութիւն, որուն կը յաջորդեն քաղաքական միջամտութիւններ, անպայման անմեղ են:

Վերջապէս, կը հաւատամ մէկ բանի, Լիբանանի հայութիւնը պիտի ապրի, հոս պիտի մնայ, ան որ կը փափաքի ձգել այս երկիրը, մէկ ուղղութիւն ունի, 3այաստան:

Պէտք է նշել նաեւ, որ 3այաստանէն փոքր պատուիրակու-

«Վերջապէս, կը հաւատամ մէկ բանի, Լիբանանի հայութիւնը պիտի ապրի, հոս պիտի մնայ, ան որ կը փափաքի ձգել այս երկիրը, մէկ ուղղութիւն ունի, 3այաստան»:

թեամբ մը հասած է արդէն օժանդակութիւններու առաջին օդանաւը, անոր պիտի յաջորդեն երկու օդանաւեր եւս:

3արցագրոյցը արտագրեց
ՍԻՆՎԻ ԱՔԷԼԵԱՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՀԱՒԱՔԱԿԱՆ...»

Շարունակուած 3-րդ էջէն

Նօրէն բժշկական օգնութեան հասնիլ, որովհետեւ Պէյրութի երեք հիմնական հիւանդանոցներ ամբողջութեամբ անգործածելի դարձան, ստիպուած էինք վիրաւորները տեղափոխել մինչեւ հեռավոր Պեքաաւի շրջան կամ հիւսիսային Լիբանանի շրջաններ», յայտնեց ան: Այն հարցումին, թէ այս աղետը կրնա՞յ պատճառ դառնալ հայկական զանգուածային գաղթի, նման մտադրութիւն կա՞յ՝ Յակոբ Բագրատունի ըսաւ, որ բնական է՝ նման խուճապային եւ ցաւալի աղետային մթնոլորտի մէջ մարդիկ ուզեն լքել երկիրը եւ հեռանալ: Ասիկա նկատուած է մեր ժողովուրդի պատմութեան մէջ, ուր որ ալ գտնուած ենք, Լիբանանի պատերազմի օրերուն, այնուհետեւ տնտեսական տագնապի, քաղաքական վերիվայրումներու օրերուն եւս, սակայն ես կը հաւատամ, որ այս անմիջական ցնցումէն ետք, երբ մարդիկ վերադառնան իրենց տրամաբանութեան եւ իրենց տունը, տեղը վերահաստատելու, վերակառուցելու, կացութիւն եւ կարելիութիւններ ստեղծուին, անոնցմէ շատ շատերը, որ պահու ազդեցութեան տակ կը մտածեն հեռանալ երկրէն, պէտք է երկրորդ անգամ մտածեն», ըսաւ ան:

Բագրատունի կարելոք նկատեց այն հանգամանքը, որ եթէ այսուհանդերձ գտնուին մարդիկ, որ կ’ուզեն արտագաղթել, իրենց անկկալիքն է, որ այդ հալեյր արտագաղթեն 3այաստան, եւ ոչ ուրիշ երկիր: «Բայց այդպէս կազմակերպուած, հաւաքական ընդհանուր արտագաղթի շարժում չկայ, նաեւ պէտք չէ մտածել նման շարժում ստեղծելու մասին, որովհետեւ վերջին հաշուով Մերձաւոր Արեւելքի մեր գաղութները ռազմավարական իմաստով են կարելոք: Բացի ատկէ, հայրենադարձութիւնը պէտք չէ ըլլայ միայն տագնապի դէպքերուն երբումով կամ հայրենադարձութիւնը պարզապէս, եթէ ինչ-որ տեղ խնդիր, աղետ ըլլայ, թշուառներու համախմբման փոխադրութիւն չէ, հայրենադարձութիւնը շատ աւելի խոր, շատ աւելի համազգային ընդհանրական գաղափար է, որուն վրայ բոլորս միասնաբար պէտք է աշխատիւք», ընդգծեց ան:

Այն դիտարկման, թէ սփիւռքի հարցերով յանձնակատար Չարեհ Սիւնանեան յայտարարած է, որ բազմաթիւ լիբանանահայեր իրենց հետ նախապէս կապ հաստատած են 3այաստան վերադառնալու համար, տնտեսական ճգնաժամը, համավարակն ու հիմա այս աղետը կ’արագացնեն այդ գործընթացը եւ թէ հարցին որքանով՝ այս մէկը կը համապատասխանէ իրականութեան՝ ան նշեց. «Շատ բնական է, որ 3այաստանի անկախութենէն ետք շատեր կը փափաքէին եւ գացի՛ն 3այաստան, այս մէկը բնական երեւոյթ է: Այո՛, նաեւ տնտեսական տագնապի ժամանակ մեկնեցան 3այաստան, բայց շատերն ալ չվերադարձան Լիբանան, շատեր 3այաստան մեկնեցան, ինչպէս շատ սուրիահայեր ու լիբանանահալեր, 3այաստանը օգտագործելով իբրեւ հանգրուան, որ այնտեղէն փոխադրուին Ամերիկա կամ եւրոպական երկիրներ»:

Ան նշեց, որ բազմաքաղութեան պատճառով չէ կրցած հետեւիլ Չարեհ Սիւնանեանի յայտարարութիւններուն, սակայն գիտէ, որ ան այս երեկոյ պէտք է հասնի Լիբանան: «Առիթ՝ կ’ունենանք այս հարցերուն մասին շատ աւելի խորքային իմաստով խօսելու անոր հետ: Մենք կ’անկկալէինք, որ պարոն Սիւնանեանը աւելի լաւ օրերուն գար Լիբանան, օրինակ՝ պարտականութիւնները ստանձնելու առաջին օրերուն, եւ ոչ թէ այսօր, որովհետեւ իբրեւ սփիւռքի հարցերով յանձնակատար կ’անկկալէինք, որ Լիբանանը, որ սփիւռքի ամենէն կարելոք գաղութներէն մէկն է, պէտք է ըլլար իր հոգածութեան առարկան», ըսաւ ան:

Ինչ կը վերաբրի 3այաստանէն սպասուող օգնութեան, Յակոբ Բագրատունի նշեց, որ գիտէ, թէ 3այաստանէն երեք օդանաւ պէտք է հասնի յառաջիկայ օրերուն: «Այսօր առաջինը պէտք է հասնի, երկրորդը՝ վաղը, անոնք օգնութիւն են, որ պէտք է յանձնուին Լիբանանի պետութեան, եւ որքան տեղեակ եմ, երրորդ օդանաւը լիբանանահայ համայնքին համար պիտի գայ: Բնականաբար, անհրաժեշտ են օժանդակութիւնները, նախ օգտակար է, որ 3այաստան նման օժանդակութիւն կատարէ Լիբանանի պետութեան, մանաւանդ որ մեր թշնամիները այս իմաստով շատ արթուն են ու շարժուն: Այսօր արդէն իսկ Լիբանան պէտք է ժամանած ըլլաւ Թուրքիոյ փոխնախագահը, Ազրպէյճան Նոյն նախաձեռնութիւններուն մէջ է: Թուրքիա տարիներէ ի վեր նման օժանդակութիւն կը կատարէ, բնական է, որ 3այաստան այս մէկը կատարէ ոչ թէ իբրեւ հակադարձութիւն միւսներուն, այլ իբրեւ պատմականօրէն Լիբանանի բարեկամ երկիր: Ես կը յիշեմ, երբ 3այաստանի երկրաշարժը պատահեցաւ, Լիբանան զօրակցեցաւ աղետեալներուն: Այսօր եւս վստահ եմ, որ այդ բարի կամեցողութիւնը կայ», ըսաւ ան:

Յակոբ Բագրատունի նշեց, որ այս ընդհանուր մթնոլորտին մէջ հասկնալի է մարդոց սրտի ցաւը, կսկիծը կը մղէ կատարելու շատ արագ օժանդակութիւններ, որոնք սակայն տասնեակներով կը կրկնուին եւ ի վերջոյ անօգուտ են: «Ընդառաջելով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի կոչին՝ 3այաստանի եւ սփիւռքի մէջ հանգանակութիւններ կը կատարուին: Կը յուսամ, որ այդ ուղեւ իսկապէս կը նպաստէ մեզի, որովհետեւ միայն ուստատեղէնի խնդիր չէ, խնդիրը անհատ մարդը ապրեցնելու եւ անհատ մարդը իր տան կապելու մէջ է», ըսաւ Բագրատունի:

Անոր համաձայն, հսկայ աշխատանք կայ, եւ նշեց, որ աղետին յաջորդող այս սկզբնական օրերուն տակաւին անոր դժոխային ազդեցութեան տակ են եւ կը փորձեն առաւելագոյն ճիգով փրկել այն, ինչ որ կարելի է ներկայ պահուն, իսկ մնացած աշխատանքները լուրջ ծրագրաւորումի կարիք ունին: «Վաղն իսկ կը կազմուի աղէտի հետեւանքով այս կացութեան համար ստեղծուած միջհամայնքային, միջկուլութեան, միջմիութեանական խորհուրդ նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդին եւ կը համակարգուի այս ամբողջ աշխատանքը», եզրափակեց ան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔՆ...

Շարունակուած Ա. Էջէն

օժանդակութիւն տրամադրեն, որովհետեւ Պէյրու-թի մէջ օգոստոսին պատահած պայթումը երկրա-շարժ մըն է, եւ պէտք է Լիբանանին օգնել, որպէս-գի քաոսի մէջ չընկղմի», ըսաւ ան՝ աւելցնելով. «Լիբանանի՝ քաոսի մէջ ընկղմիլը կ'ազդէ ամբողջ շրջանին վրայ»:

«Պէտք է բոլորս մեր կարելին ընենք, որպէսզի բռնութիւնն ու քաոսը Լիբանանին չտիրեն», նշեց Ֆրանսայի նախագահը՝ աւելցնելով, որ քաոսը կը կառավարուի կողմերէ, որոնք կ'ուզեն Լիբանանի եւ շրջանին մէջ կայունութիւնը քայքայել:

«Լիբանանեան իշխանութիւնները պէտք է աշխատանք տանին տագնապին քաղաքական ու տնտեսական լուծման ուղղութեամբ», ըսաւ Մաք-րոն:

Ան յայտնեց, որ օժանդակութեան առաջարկը «կը ներառէ աջակցութիւն Պէյրութի նաւահան-գիստի պայթումին շուրջ հաւաստի անկախ հե-տաքննութիւն կատարելու համար»:

«Այն գումարները, որոնք այսօր կը հաւաքուին, պէտք է միայն սկիզբ ըլլան», ընդգծեց Ֆրանսայի նախագահը:

«Իսրայէլ ակնարկեց, որ պատրաստ է Լիբանա-նին օժանդակելու», ըսաւ Մաքրոն եւ նշեց. «Նա-խագահ Աուրի Էտը քննարկեցի բարեկարգումի, փտածութեան դէմ պայքարի եւ ելեւմտական հսկողութեան կարեւորութիւնը»:

Նախագահ Աուր իր խօսքին ընթացքին իր եւ լի-բանանցի ժողովուրդին անունով բարձր գնահա-տեց միջազգային զօրակցութիւնը, որ արտայայ-տուեցաւ միջազգային ղեկավարներու եւ պատաս-խանատուներու Լիբանան այցելութեամբ կամ կա-րեկցանքի եւ վերջերու դարմանման համար աջակցութեան արտայայտութիւններով հեռաձայ-նային հաղորդակցութեամբ, ինչպէս նաեւ եղբայ-րական ու բարեկամ պետութիւններու կողմէ մար-դասիրական ու բժշկական անմիջական օժանդա-կութիւններու ուղարկումով:

Ան նշեց, որ շարք մը պատասխանատուներ եւ միջազգային փրկարար խումբեր շտապեցին գալ Լիբանան եւ շօշափելիօրէն տեսան տարողու-թիւնը ողբերգութեան, որ հարուածեց բոլոր մար-գերը, մասնաւորաբար անոնք, որոնք նշուած են խորհրդաժողովի հրաւիրագիրին մէջ՝ առողջա-պահութեան, կրթութեան, վերակառուցման եւ սննդեղէնի ապահովման մարզերը:

Ան նշեց. «Զաւոդուածի վերակառուցումն ու Պէյրութի փայլքին վերականգնումը շատ բանի կը կարօտին, որովհետեւ կարիքները շատ մեծ են, եւ պէտք է աճապարեք զանոնք բաւարարելու մա-նաւարդ ձմրան եղանակէն առաջ, երբ անունն մնացած քաղաքացիներուն տառապանքները կ'աւելնան: Ինչ կը վերաբերի հաստատելիք նուի-րատուութիւններու սնտուկին, ապա կը շեշտեմ, որ պէտք է անոր վարչութիւնը բխի խորհրդաժողո-վէն»:

«Ժողովուրդիս առջեւ յանձնառութիւն ստանձ-նեցի արդարութեան հաստատման, որովհետեւ արդարութիւնը միայն կրնայ սզացողներն ու իւ-րաքանչիւր լիբանանցին մխիթարել, եւ բոլոր անոնք, որոնց պայթումին մեղսակցութիւնը կը փաստուի, պիտի դատուին լիբանանեան օրէնքնե-րուն հիմամբ», ըսաւ Նախագահ Աուն:

Լիբանանի նախագահը նաեւ նշեց. «Յանձնա-ռութիւն ստանձնեցի նաեւ փտածութեան դէմ պայքարելու եւ բարեկարգում կատարելու, եւ հա-կառակ բոլոր արգելքներուն, սկսան շօշափելի քայլերը՝ նախ եւ առաջ իրաւական հաշուեքննու-թիւնը, որ միայն մէկ կառոյցով պիտի չսահմանա-փակուի, այլ պիտի ներառէ բոլոր կառոյցները, եւ այսօր լիովին կը հաւատամ, որ մեր Պէյրութը, ինչ-պէս ամէն անգամ, ուղքի պիտի կանգնի»:

Զաթարի շէյխ Թամիմ պըն Յամատ իշխանը յայտարարեց, որ «խորհրդաժողովի գումարումը կը հաստատեմ, որ միջազգային ընտանիքը վճա-կամ է ահաւոր պայթումին պատճառով օժանդա-կելու Լիբանանին»՝ նշելով. «Լիբանանը չի կրնար այս տագնապը առանձինը յաղթահարել»:

Զաթարի իշխանը յայտարարեց, որ իր երկիրը Լիբանանին օգնելու համար 50 միլիոն տոլար կը տրամադրէ՝ աւելցնելով. «Միջազգային ընտանի-քին կոչ կ'ուղղենք ելեւմտական անմիջական օժանդակութիւններ տրամադրելու»:

Եւրոպական Միութիւնը եւս յայտարարեց. «Լի-բանանին 30 միլիոն եւրօ արժողութեամբ աջակ-ցութիւն պիտի ցուցաբերենք, եւ այդ գումարները պիտի ներկայացնենք ՄԱԿ-ին եւ ոչ կառավարա-կան կազմակերպութիւններուն»:

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամի յիշեցուց Միացեալ Նահանգները եւ Լիբա-նանը իրարու միացնող կապերը՝ նշելով. «Ամերիկ-եան օժանդակութիւնները դէպի Լիբանան շարժե-ցան դէպքէն ետք, որուն նմանը նախապէս չէ տեսնուած»:

«Անհրաժեշտ է գիտնալ, թէ ո՞վ կը կանգնի Պէյ-րութի նաւահանգիստին մէջ արձանագրուած պայթումին ետին եւ ատոր պատճառը, ինչպէս նաեւ պատասխանել այն հարցումին, թէ պայթու-մը արկա՞ծ էր, թէ՞ ոչ»:

Միացեալ Նահանգներու Նախագահը նաեւ ընդգծեց, որ իր երկիրը կը շարունակէ Ֆրանսայի կողքին աշխատիլ եւ յանձնառու է ներկայ պայ-մաններուն յաղթահարման համար Լիբանանին օգնելու:

Մեւտական Արաբիոյ արտաքին գործոց նա-

խարար Ֆայսալ պըն Ֆարհան յայտարարեց, որ «Ռիատ Լիբանանի կողքին կը կանգնի»՝ ընդգծե-լով «կարեւորութիւնը թափանցիկ ու անկախ հե-տաքննութեան պայթումին շուրջ, որ տեղի ունե-ցաւ Պէյրութի նաւահանգիստին մէջ»:

Պըն Ֆարհան նշեց, որ իր երկիրը առաջին եր-կիրներէն էր, որ Լիբանանին անմիջական օժան-դակութիւն տրամադրեց:

Յորդանանի Ապտալա Բ. թագաւորը Պէյրութի նաւահանգիստին պայթումը նկատեց «ահաւոր», մասնաւորաբար անոր համար, որ տեղի ունեցաւ Լիբանանի մէջ «Զորոնա» ժաիրի համաճարակի եւ տնտեսական ու ելեւմտական զոյգ տագնապ-ներու պայմաններուն մէջ:

Ապտալա Բ. թագաւորը յայտարարեց, որ Յոր-դանանի արտաքին գործոց նախարար Այման Սա-ֆատի յառաջիկայ շաբաթ պիտի այցելէ Լիբա-նան՝ աւելցնելով, որ իր երկիրը պատրաստ է Լի-բանանին օժանդակութիւններու տրամադրման համար աշխարհի համար հանդիպման վայր դառ-նալու:

Միջին Արեւելքի հարցերով Չինաստանի յա-տուկ պատուիրակ Յայ Ճուն յայտարարեց, որ չի-նական կառավարութիւնը Լիբանանին մէկ միլիոն տոլար արժողութեամբ ելեւմտական անմիջական օժանդակութիւն պիտի տրամադրէ՝ աջակցելու համար վիրաւորներու դարմանման եւ պայթումէն վնասուածներուն օգնութեան:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարարը յայ-տարարեց, որ իր երկիրը ներկայիս փրկարարա-կան աշխատանքներուն կողքին 10 միլիոն եւրօ (11,79 միլիոն տոլար) արժողութեամբ օժանդակու-թիւն կը խոստանայ:

Խորհրդաժողովի աւարտին հրապարակուած հաղորդագրութիւնը յայտարարեց. «Միջազգային ընտանիքն ու Լիբանանի ամէնէն սերտ բարեկամ-ներն ու գործընկերները լիբանանցի ժողովուրդը յուսախաբ պիտի չընեն»: Հաղորդագրութեան մէջ նշուեց, որ Պէյրութի պայթումը ցնցում մըն էր ամբողջ լիբանանցի ժողովուրդին, անոր բարե-կամներուն եւ արտասահմանի գործընկերներուն համար:

Հաղորդագրութիւնը աւելցուց, որ խորհրդաժո-ղովին մասնակիցները որոշած են վճռական ու միասնական կերպով աշխատելու Պէյրութին ու լի-բանանցի ժողովուրդին օգնելու՝ յաղթահարելու 4 օգոստոսի ողբերգութիւնը, եւ համաձայնեցան յա-ռաջիկայ օրերուն ու շաբաթներուն նկատառելի աղբիւրներ զօրաշարժի ենթարկելու՝ Պէյրութի եւ լիբանանցի ժողովուրդին անմիջական կարիքները բաւարարելու համար:

«Գործընկերները պատրաստ են Լիբանանի տնտեսական եւ ելեւմտական վերականգնման, ինչ որ կայունութեան իրագործման ռազմավարու-թեան ծիրին մէջ կը պահանջէ լիբանանեան իշխա-նութիւններուն ամբողջական յանձնառութիւնը՝ արագօրէն միջոցառումներն ու բարեկարգումնե-րը կատարելու», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Խորհրդաժողովին մասնակիցները նաեւ համա-ձայնեցան, որ իրենց օժանդակութիւնները ըլլան արագ, բաւարար եւ լիբանանցի ժողովուրդի կա-րիքներուն համահունչ, ինչպէս նաեւ համակար-գուած՝ ՄԱԿ-ի ղեկավարութեան տակ, եւ ուղ-ղակիօրէն լիբանանցի ժողովուրդին յանձնուին՝ բարձր մակարդակի ազդուութեամբ ու թափանցի-կութեամբ:

Հաղորդագրութիւնը յայտնեց. «Հիմնւելով 4 օգոստոսի պայթումին շուրջ չեզոք, հաւաստի եւ անկախ հետաքննութեան օժանդակելու Լիբանա-նի խնդրանքին վրայ, գոյացաւ անմիջական կա-րիք մը, որ ապահովուած է»:

Միւս կողմէ, Եգիպտոսի Նախագահ Ապտէլ Ֆաթահ Սիսի Լիբանանի մէջ «տարբեր դիրքերու վրայ գտնուող անկեղծ հայրենասէրներուն» կոչ ուղղեց՝ «իրարու թեւ-թիկունք կանգնելու եւ իրենց հայրենիքը գերծ կացուցելու շրջանային պարա-նաճգութիւններէն ու տագնապներէն»:

Ան լիբանանցիներուն կոչ ուղղեց՝ «իրենց ջա-նքերը կեդրոնացնելու լիբանանեան ազգային պե-տութեան կառոյցներու հզօրացման եւ լիբանանցի ժողովուրդի ձգտումներուն բաւարարման վրայ»:

Եգիպտոսի Նախագահի բանբեր Պասսամ Ռա-տի նշեց. «Սիսի այսօր տեսակապի ճամբով մաս-նակցեցաւ Լիբանանի աջակցութեան միջազգա-յին խորհրդաժողովին, որ կազմակերպուած էր Ֆրանսայի եւ ՄԱԿ-ի կողմէ, եւ որուն կը մասնակ-ցէին շարք մը պետութիւններու եւ կառավարու-թիւններու ղեկավարներ»:

Նշենք, որ ՄԱԿ-ի գնահատման համաձայն Լի-բանանի մէջ միայն առողջապահութեան մարզի կարիքները կը գնահատուին 85 միլիոն տոլարով: Առողջապահութեան համաշխարհային կազմա-կերպութեան բանքերը իր կարգին յայտնած էր, թէ հիւանդանոցներուն հասած վնասները երկրին տրամադրութեան տակ եղող անկողիներէն նուա-զեցուցած են 500-ով:

Ֆրանչիսկոս պապը երէկ յայտնեց. «Դարձեալ կ'աղօթենք Լիբանանի համար, որպէսզի Աստու-ծոյ օգնութեամբ ու բոլոր անկեղծներուն մասնակ-ցութեամբ վերա- ծնի անոր՝ տարբեր մշակոյթնե-րու հանդիպման պտուղ, ազատ եւ ուժեղ իւրայա-տուկ ինքնութիւնը»:



ՀԱՂՈՐԴ-ԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 24

ՄԻՄՈՒՆԱՔ, «ՔՈՐՈՆԱ»-Ի ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Պէյրութի նաւահանգիստի պայթումէն ետք անոր ստեղծած արհաւիրքը պէտք չէ մոռացութեան տայ, որ «Զորոնա»-ի համաճարակը կը շարունակէ մնալ ծանր վտանգ:

Առ այդ, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ հակառակ տիրող կացութեան ահաւոր հետեւանքներուն, շարունակէ կանխազգուշացման միջոցները եւ զգուշ ըլլայ համաճարակի վարակումէն:

Անցնող 10 օրերուն ընթացքին, «Զորոնա»-ի ճգնաժամային շտապին նա-խաձեռնութեամբ ու ծախսերով, Պուրճ Յամուտի մէջ կատարուեցաւ «Փի. Սի. Ար.»-ի 420 քննութիւն, որոնցմէ ի յայտ եկաւ 22 վարակում:

Վարակուած պարագաները Շտապին ջանքերով ստացան համապատաս-խան բուժում հիւանդանոցներու կամ մեկուսացման վայրերու մէջ, եւ հակա-նեխուեցաւ անոնց շրջապատը:

«ԶՈՐՈՆԱ»-Ի ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՏԱՊ



ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎՆԱՍՆԵՐՈՒ ԶԱՓԱԳՐՈՒՄԻՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՈՒԹՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Պուրճ Յամուտի բնակիչներուն, Մայրաքաղաքն ու շրջակայքը ցնցած պայթումը կը հան-դիսանայ աղէտ մը, որ պատճառեց ցաւալի մարդկային կո-րուստներ եւ նիւթական ծանր վնասներ: Բոլորս գիտենք նիւթական ծանր պայմաններն ու դժուարութիւնները, որոնցմէ կը տառապին հայրենիքն ու ժողովուրդը, անհատ-ներ, ընտանիքներ եւ հաստատութիւններ: Շտապ օգնու-թեան գերագոյն խորհուրդը յայտարարեց, որ վնասներու չա-փագրում պիտի կատարէ՝ առ ի պատրաստութիւն հատուցումներու կամ նո-րոգութեան ծախսերուն մասնակցելու: Առ այդ, մեր բնակչութեան ուշադրու-թեան կը յանձնենք հետեւեալը.-

Ա.- Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդը հաղորդագրութեամբ մը զգուշացուց քաղաքացիները իր անունով ներկայացողներէ՝ ընդգծելով, որ վնասներու չափագրում կատարողները իր յանձնախումբերէն եւ լիբանա-նեան բանակէն կազմուած յստակ խմբակներ են:

Բ.- Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդի աշխատանքները հանգըր-ւանային են, եւ սկսած է առաջին փուլը, ուր զինուորական խմբակները վնասներու չափագրում կը կատարեն՝ ապա **թեքնիք** եւ երկրաչափական յանձնախումբեր ստուգումներ կը կատարեն, ամբողջացնելու համար իւրա-քանչիւրի հատուցումներու թղթածրարը:

Վնասներու չափագրումի հոլովոյթը, ըստ Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդի յայտարարութեան, հետեւեալն է.-

- Լիբանանեան բանակին հետ կազմուած յանձնախումբեր կը կատարեն Պէյրութի նաւահանգիստի պայթումէն յառաջացած վնասներու չափագրու-մը:

- Զաղաքացիները պէտք է լուսանկարներով կամ վիտէոներով փաստա-գրեն այդ վնասները:

- Այդ լուսանկարները, անձնաթուղթի պատճէնը, նաեւ փաստաթուղթերը, որոնք ցոյց կու տան իրենց իրաւունքը վնասուած յարկաբաժինին, ինքնա-շարժին, շէնքին, վաճառատան գծով, իբրեւ սեփականատեր, վարձակալ, կամ այլ ձեռով իրաւատեր, ներկայացնել թաղապետին:

- Այս բոլորին մասին թաղապետը կը պատրաստէ հաստատագիր մը, որուն մէջ վիրոյիշեալներուն վրայ կ'աւելցնէ բնակչութեան մանրամասն հասցէ եւ հեռաձայնի թիւ:

- Թաղապետը այս թղթածրարը կը յանձնէ լիբանանեան բանակի չա-փագրման յանձնախումբերուն, կամ վնաս կրած անձերը ուղղակիօրէն կը յանձնեն այդ խմբակներուն, երբ իրենց մօտ գան:

- Եթէ կան վնաս կրած անձեր, որոնք կ'ուզեն հատուցումներէն առաջ կա-տարել Նորոգութիւնները, պէտք է կատարեն վիրոյիշեալը, նաեւ պէտք է կցեն պաշտօնական վաճառագիր (**Ֆաքթիւր**) եւ ստացագիրներ, ուր յստա-կօրէն կը յիշուին կատարուած աշխատանքները, Նորոգուած իրերն ու գու-մարները, որպէսզի զանոնք ներկայացնեն յիշեալ խմբակներուն:

Կը խնդրուի քաղաքացիներէն իրագէկ ըլլալ այս հոլովոյթին՝ պահպանե-լու համար իրենց իրաւունքները:



AFHIL
ARMENIAN MUTUAL FUND

20 Years of Commitment

" The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others "

Mahatma Gandhi



Health Insurance



Travel Insurance



GoodCare Clinic



Car Insurance



Health Clubs



Home Medical Equipment



BOB - Western Union



University and Student Fund



«29/13» Health Magazine

www.afhil.com | AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 01 242 556/7